

3

ԱՊՐԻԼԻ  
2021

Luys Lnyju®



ԷՐԴՈՂԱՆԱԿԱՆ  
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՎՏՈՐԻՏԱՐ  
ՈՒՂԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	1
1. ԷՐԴՈՂԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՎՏՈՐԻՏԱՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ.....	2
1.1. Թուրքիայում ավտորիտար իշխանության ձևավորումը մինչև 2016թ. ռազմական հեղաշրջման փորձը .....	4
1.2. 2016թ. ռազմական հեղաշրջման փորձը և Էրդողանի ավտորիտար իշխանության վերջնական ամրապնդումը .....	9
2. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ.....	20
3. ԷՐԴՈՂԱՆԻ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ԱՎՏՈՐԻՏԱՐԻՉՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱՈՃԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	36

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայում 2002 թվականից ի վեր ստանձնելով իշխանությունը՝ «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ-ԱԿՔ) քաղաքական գործունեությունը միտված է եղել երկրում ավտորիտար համակարգի հաստատմանը և կուսակցության առաջնորդ Էրդողանի միանձնյա իշխանության ամրապնդմանը: Այս նպատակին հասնելու համար Էրդողանը և նրա քաղաքական թիմը հենվել են Թուրքիայում լայն տարածում ունեցող էթնիկ թուրք-ազգայնական գաղափարախոսության վրա՝ միաժամանակ ձգտելով մեծացնել կրոնական (իսլամական) բաղադրիչի ազդեցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և մարզինալացնել իր «աշխարհիկ» ընդդիմախոսներին և հասարակության լայն շերտերին:

Էրդողանի և նրա կուսակցության ավտորիտար նկրտումները հատկապես նկատելի դարձան 2012-ից հետո, իսկ դրանց տեմպը զգալիորեն ավելացավ 2016թ. հուլիսին տեղի ունեցած հեղաշրջման անհաջող փորձից հետո: Այժմ Թուրքիան զսպումների և հակակշիռների առկայությամբ խորհրդարանական նախկին համակարգից ամբողջությամբ վերածվել է ավտորիտար պետության, որտեղ ողջ քաղաքական իշխանությունը կենտրոնացված է գործադիր նախագահի և նրա գլխավորած իշխող կուսակցության ձեռքերում:

Թուրքիայում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացները, այդ երկրում պետական գաղափարախոսության փոփոխությունները մեծապես ազդում են Անկարայի տարածաշրջանային քաղաքականության վրա: Էրդողանի ավտորիտար Թուրքիան՝ համեմված ազգայնական և իսլամական գաղափարներով, կրկին դարձել է տարածաշրջանային անվտանգության գլխավոր սպառնալիքներից մեկը: Հետևաբար, Թուրքիայից եկող մարտահրավերները գնահատելիս անհրաժեշտ է ոչ միայն ուսումնասիրել վերջինիս արտաքին և անվտանգային քաղաքականությունը, այլև ճիշտ գնահատել այնտեղ տեղի ունեցող ներքաղաքական գործընթացները: Վերոհիշյալ հարցերի ուսումնասիրությունը հատկապես կարևոր է Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Հարավային Կովկասում ստեղծված նոր իրողությունների և տարածաշրջանում Թուրքիայի դերակատարության մեծացման և վերջինիս նոր հավակնությունների համատեքստում:

Սույն վերլուծության շրջանակներում փորձել ենք ուսումնասիրել Էրդողանի կողմից Թուրքիայում ավտորիտար իշխանության հաստատման և ամրապնդման գործընթացները, դրանց գաղափարական հիմքերը, գնահատել դրանց ազդեցությունը Անկարայի արտաքին և տարածաշրջանային քաղաքականության

վրա: Միաժամանակ արձանագրել ենք, որ երկրում ավտորիտարիզմի ձևավորման ճանապարհին Թուրքիայի և Հայաստանի գործող իշխանությունների գործելաճի որոշ դրվագներ ունեն տարօրինակ նմանություններ, թեև Էրդողանի ավտորիտար համակարգը հիմնված է ազգայնական և կրոնական գաղափարների և պանթուրքական ծրագրերի վրա, իսկ Հայաստանում դժվար է պատկերացնել, թե ինչի կարող է հանգեցնել ավտորիտար համակարգի ձևավորումը՝ համեմված այսօրվա մերձիշխանական շրջանակներում գերիշխող ազգայինը բացառող, նեո-լիբերալ, գլոբալիստական գաղափարներով: Տվյալ իրողության ուսումնասիրությունը հատկապես արդիական է Հայաստանում ստեղծված իրավիճակի, Ձինված ուժեր-վարչապետ հակասությունների և գործադիր իշխանության կողմից երկրի բոլոր պետական ինստիտուտների նկատմամբ լիարժեք վերահսկողություն սահմանելու ձգտման պայմաններում:

## 1. ԷՐԴՈՂԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ԱՎՏՈՐԻՏԱՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ

Նախ փորձենք հասկանալ, թե ներքաղաքական ինչպիսի գործընթացների արդյունքում Թուրքիան քիչ թե շատ ժողովրդավարական, աշխարհիկ պետությունից վերածվեց ավտորիտար կառավարման համակարգով, խիստ ազգայնական ու կրոնական (իսլամական) ուղղվածություն ունեցող երկրի: Թուրքիայի քաղաքական կյանքում պատմականորեն համառ պայքար է ընթացել թուրքական ինքնության երկու իրարամերժ գաղափարախոսությունների կամ տեսլականների՝ աշխարհիկ քեմալականության<sup>1</sup> և քաղաքական իսլամի միջև<sup>2</sup>: Վերջին հարյուրամյակի

<sup>1</sup> «Քեմալականությունը, որը կոչվել է Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի անունով, գերակշռող գաղափարախոսությունն էր Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից՝ 1923-ից ի վեր: Այն հիմնված է վեց հիմնական հենասյուների վրա, որոնք 1937 թվականից ի վեր արտացոլված են Թուրքիայի Սահմանադրության մեջ՝ հանրապետականություն, ստատիզմ (նախատեսում է պետության ուժեղ դերակատարություն արդյունաբերության զարգացման, տնտեսության կարգավորման և սոցիալական բարեկեցության ապահովման գործում), պոպուլիզմ, կոշտ աշխարհիկություն, ազգայնականություն (շեշտը դնելով ներքին ծուլման և ոչ թե ագրեսիայի վրա. «Խաղաղություն տանը, խաղաղություն աշխարհում» սկզբունք) և ռեֆորմիզմ, որի նպատակն է պետականության արևմտյան պրակտիկական Թուրքիայի պայմաններին հարմարեցնելը: Միասին դրանք ներկայացնում են ֆրանսիական յակոբիզմի թուրքական մոդելը, որը հենց ինքը՝ Աթաթուրքը սահմանել է որպես քաղաքական դեսպոտիզմի օգտագործման միջոցով ավանդական մտածելակերպ ունեցող թուրք-մահմեդական բնակչության շրջանում գերակշռող սոցիալական դեսպոտիզմը քանդելու մեթոդ»:  
Oxford Islamic studies online, Kemalism, <http://www.oxfordislamicstudies.com/print/opr/t236/e0440> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>2</sup> The Fall of Kemalism and the New Face of Political Islam: 20 Crucial Years in Turkey's History, (1980-2002) By Maria Chiara Cantelmo, January 2018, <https://www.athensjournals.gr/history/2018-4-1-3-Cantelmo.pdf> (այցելվել է 31.03.2021թ.):

ընթացքում Թուրքիայի քաղաքական համակարգը, դրանում առկա զսպումների և հակակշիռների մեխանիզմները ստեղծել էին այնպիսի միջավայր, որ քաղաքական կյանքում գերիշխում էր աշխարհիկ-քեմալականության գաղափարախոսությունը, իսկ դրանից ցանկացած շեղում արժանանում էր լուրջ դիմադրության՝ հաճախ հանգեցնելով զինված հեղաշրջումների<sup>3</sup>:

Այս իրավիճակը աստիճանաբար սկսեց փոփոխությունների ենթարկվել 2002-ից, երբ Թուրքիայում իշխանության եկավ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ)՝ Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ: Էրդողանի գլխավորած քաղաքական ուժի շուրջ աստիճանաբար սկսեց համախմբվել աջակիցների ժողովրդական մի համախումբ, որը իր մեջ ներառում է տարբեր գաղափարախոսությունների կրողներին՝ հիմնականում պահպանողական, իսլամական, աջ-կենտրոնամետ, նաև որոշ աջ ազգայնական տարրերի շրջանակներից: Ի հակակշիռ սրան՝ ձևավորվեց ընդդիմադիր դաշտի ավելի բազմաշերտ բևեռ, որը ներառում է աշխարհիկ լիբերալ, ձախական ուժերին, որոշ ազգայնական ուժերի, քրդերի մեծամասնությանը, իսկ որոշակի պահից սկսած՝ նաև իսլամական քարոզիչ Ֆեթուլլահ Գյուլենի հետևորդներին<sup>4</sup>: Հասարակության, այդ թվում՝ գաղափարախոսական, բևեռացումը Էրդողանը մեծապես օգտագործեց սեփական ավտորիտար հավակնությունները կյանքի կոչելու նպատակով՝ հաճախ կիրառելով որոշ մարտավարական խուսանավումներ, որոնք միտված էին կանխելու ընդդիմության միավորման փորձերը<sup>5</sup>:

2002-ից ի վեր Թուրքիայի ներքաղաքական լանդշաֆտը բաղկացած է եղել հիմնականում 4 գործընթացներից՝

- 1) երկարատև հակամարտությունը կրոնական և աշխարհիկ թևերի միջև,
- 2) քաղաքական համակարգի փոփոխությունը խորհրդարանականից դեպի ուժեղ գործադիր նախագահական՝ Էրդողանի իշխանության ամրապնդմամբ,
- 3) քրդական փոքրամասնության մարզինալացումը և ճնշումը,
- 4) իշխանության համար պայքարը Էրդողանի կողմնակիցների և Գյուլենական շարժման միջև:

<sup>3</sup> The Separation of Mosque and State: Islam and Democracy in Modern Turkey Susanna Dokupil, September 2002, <https://core.ac.uk/download/pdf/230401807.pdf> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>4</sup> Soner Cagaptay, *The New Sultan: Erdoğan and the Crisis of Modern Turkey*, London: I.B. Tauris, 2017, Chapter 1.

<sup>5</sup> Erdogan's Way, The Rise and Rule of Turkey's Islamist Shapeshifter, By Kaya Genc, September/October 2019, Foreign Affairs, <https://www.foreignaffairs.com/articles/turkey/2019-08-12/erdogans-way> (այցելվել է 31.03.2021թ.):

Էրդողանի «Արդարություն և զարգացում» կուսակցությունը իշխանությունը ստանձնելու սկզբնական փուլում որպես իշխանության պահպանման և ամրապնդման հիմնական խոչընդոտ դիտարկում էր պետական ինստիտուտները՝ նախ և առաջ գինված ուժերն ու դատական համակարգը<sup>6</sup>: Հետագայում, հատկապես 2013թ. հակակառավարական ցույցերից հետո, իշխանությունների մտահոգության հիմնական թիրախը դարձան ԶԼՄ-ներն ու քաղաքացիական հասարակությունը, որոնց Էրդողանը սկսեց պարբերաբար մեղադրել օտարերկրյա թշնամական ուժերի գործակալները լինելու մեջ<sup>7</sup>:

### 1.1. Թուրքիայում ավտորիտար իշխանության ձևավորումը մինչև 2016թ. ազգային հեղաշրջման փորձը

Պաշտոնավարման սկզբնական փուլում ԱԶԿ-ը սերտորեն համագործակցում էր Ֆեթուլլահ Գյուլենի հետ, ով կանգնած էր վերջինիս հաջողության ակունքներում և մտերիմ կապեր ուներ Էրդողանի հետ: Գյուլենի գլխավորած «Հիզմեթ» («ծառայություն») շարժումը աջակցում էր Էրդողանի քաղաքականությանը, միաժամանակ շարժման ներկայացուցիչները խոր արմատներ էին գցում Թուրքիայի պետական կառավարման համակարգում: Այս ընթացքը համընկնում էր նաև Թուրքիայի ընդգծված արևմտամետ քաղաքականության հետ, երբ Թուրքիայի իշխող կուսակցությունը որդեգրել էր ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ ավելի խոր ինտեգրման քաղաքականություն և դեռ չէր կորցրել ԵՄ-ին անդամակցության հույսերը: Այս քաղաքականությունը և Գյուլենի հետ համագործակցությունը օգտակար էր Էրդողանի և իշխող կուսակցության համար, քանի որ հնարավորություն տվեց զգալիորեն թուլացնել հիմնական քաղաքական մրցակիցներին՝ ձախ-կենտրոնամետ Հանրապետական ժողովրդական կուսակցությանը (ՀԺԿ-CHP), ծայրահեղ ազգայնական «Ազգայնական շարժում» կուսակցությանը (ԱՇԿ-MHP), հետագայում նաև քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցությանը (ԺԴԿ-HDP):

Կախված ներքաղաքական և տարածաշրջանային գործընթացներից՝ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը պարբերաբար վերանայում է իր

<sup>6</sup> Top Generals Quit in Group, Stunning Turks, By Gul Tuysuz and Sabrina Tavernise, The New York Times, July 29, 2011, <https://www.nytimes.com/2011/07/30/world/europe/30turkey.html> (այցելվել է 31.03.2021թ.), How Turkey's courts turned on Erdogan's foes, By Reuters, May 4, 2020, <https://www.reuters.com/investigates/special-report/turkey-judges/> (այցելվել է 31.03.2021թ.), Erdogan purges army and judiciary after failed coup, DW, 17.07.2016, <https://www.dw.com/en/erdogan-purges-army-and-judiciary-after-failed-coup/a-19405458> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>7</sup> Erdogan Places Blame for Protests On International Conspiracy, Al-Monitor, Jun 14, 2013, <https://www.al-monitor.com/pulse/originals/2013/06/erdogan-gezi-conspiracy-taksim-governance-authoritarian-akp.html#ixzz6mvA5VCTu> (այցելվել է 31.03.2021թ.):

գործունեության գաղափարական հիմքերը: Իշխանության գալու սկզբնական փուլում այն հանդես էր գալիս աշխարհիկ քննալականության գաղափարի պաշտպանության դիրքերից, ինչը պայմանավորված էր Արևմուտքի հետ ինտեգրման խորացման և ընդդիմադիր ու մրցակից ուժերի աշխարհիկ ընտրազանգվածի կլանման ձգտմամբ: Սկսած 2000-ականների կեսերից, երբ իշխող ԱԶԿ-ի դիրքերը էականորեն ամրապնդվել էին, երկրում, այդ թվում՝ Գյուլենի ջանքերի շնորհիվ, զգալիորեն ավելացել էին քաղաքական իսլամի գաղափարակիցները, իսկ ԵՄ-ի հետ ինտեգրման հույսերը մեծ մասամբ տապալվել էին, Էրդողանի կուսակցությունը աստիճանաբար սկսեց անցում կատարել դեպի քաղաքական իսլամի գաղափարախոսություն:

Երբ 2007թ. աշնանը Էրդողանը որոշեց հանել համալսարաններում կանանց՝ գլխաշոր կրելու արգելքը, այն աշխարհիկ պետական համակարգի կողմից դիտարկվեց որպես ուղղակի սպառնալիք Թուրքիայի Սահմանադրության հիմնական դրույթներին և լուրջ քայլ դեպի թուրք հասարակության իսլամականացում: Պետական համակարգի ռազմական և աշխարհիկ տարրերի ճնշման ներքո Թուրքիայի գլխավոր դատախազը Սահմանադրական դատարանում իրավական գործընթաց նախաձեռնեց, որով նախատեսվում էր արգելել իշխող կուսակցության և նախագահ Գյուլի ու վարչապետ Էրդողանի քաղաքական գործունեությունը՝ Թուրքիայի Սահմանադրության 2-րդ հոդվածը (աշխարհիկության մասով) խախտելու համար: Հայցը մերժվեց, իսկ իշխող կուսակցությունը, համագործակցելով Գյուլենի շարժման հետ սերտորեն փոխկապակցված դատախազների և ոստիկանության հետ, սկսեց ակտիվորեն հետապնդել քաղաքական հակառակորդներին: Սակայն հետագայում Էրդողանի և նրա կուսակցության հակասությունները ավելի սրվեցին ոչ միայն դատական և զինվորական համակարգի վերնախավի, այլև Գյուլենի ու նրա գլխավորած շարժման հետ:

2010-ին Էրդողանի հրահանգով Թուրքիայի դատախազությունը քննություն սկսեց՝ կապված 2003թ. ենթադրյալ հեղաշրջման փորձի հետ, որի **իրական նպատակն էր ազատվել անցանկալի զինվորական վերնախավից**: Երբ 2011-ին զինվորականության նկատմամբ այս աննախադեպ ճնշումները սաստկացան, և ձերբակալվեցին երկու բարձրաստիճան գեներալներ, **Թուրքիայի զինված ուժերի ցամաքային, ծովային և օդային ուժերի հրամանատարները հրաժարական տվեցին՝ այդ քայլով հույս ունենալով հանրային աջակցություն գեներացնել և կանգնեցնել վերոհիշյալ գործընթացը**<sup>8</sup>:

<sup>8</sup> Top Generals Quit in Group, Stunning Turks, By Gul Tuysuz and Sabrina Tavernise, July 29, 2011, <https://www.nytimes.com/2011/07/30/world/europe/30turkey.html> (այցելվել է 31.03.2021թ.):

Արդյունքը եղավ հակառակը՝ Էրդողանը Թուրքիայի գեներալական կազմի ղեկավարի և այլ բարձրաստիճան զինվորական պաշտոններում նշանակեց իրեն ավելի հավատարիմ անձանց և ամրապնդեց իր ազդեցությունը Թուրքիայի ՁՈՒ-ի ու գեներալական կազմի նկատմամբ: Այդ իրադարձությունների ընթացքում ձերբակալվեցին մի շարք սպաներ՝ այդ թվում բարձրաստիճան գեներալներ, Էրդողանը աստիճանաբար քանդեց Թուրքիայի գեներալական կազմի բյուրոկրատական ինքնուրույնությունը և սկսեց անխոչընդոտ միջամտել զինվորականների առաջխաղացման, պաշտոնից հեռացման, ներքին կանոնակարգի հարցերին<sup>9</sup>:

Նույնը կարելի է ասել դատական համակարգի մասին. 2010-ին Էրդողանը, որոշ առաջադիմական գաղափարների քողի տակ, ինչպես նաև դատարանները զինվորականների կախվածության տիրույթից հանելու պատճառաբանությամբ, սահմանադրական հանրաքվե նախաձեռնեց, որի իրական նպատակն էր թուլացնել դատական համակարգի նկատմամբ իր աշխարհիկ (քեմալական) հակառակորդների ազդեցությունը: Հանրաքվեի արդյունքում գործող կառավարության համար ողջ դատական համակարգի նկատմամբ ավելի մեծ քաղաքական վերահսկողության մեխանիզմներ ստեղծվեցին, ինչը հնարավորություն տվեց ամրապնդել Թուրքիայում իշխող կուսակցության դիրքերը<sup>10</sup>:

Որոշակիորեն ազատվելով ՁՈՒ-ի և դատական համակարգի անցանկալի տարրերից՝ Էրդողանի հաջորդ թիրախը դարձան լրագրողներն ու քաղհասարակության ներկայացուցիչները՝ հատկապես Ստամբուլում «Գեզի զբոսայգու» հետ կապված հայտնի ցույցերի ժամանակ և դրանցից հետո, երբ ձերբակալվեցին բազմաթիվ լրագրողներ և ակտիվիստներ<sup>11</sup>: Այդ իրադարձություններից, ինչպես նաև 2016-ի անհաջող հեղաշրջման փորձից հետո «Լրագրողների պաշտպանության կոմիտեն», մի շարք այլ միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ պարբերաբար Թուրքիային համարում են

<sup>9</sup> Special Report: Erdogan: The strongest man in Turkey, By Simon Cameron-Moore, Daren Butler, AUGUST 8, 2011, <https://www.reuters.com/article/us-turkey-erdogan-idUSTRE7773X420110808> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>10</sup> Major reforms cast as a power grab, Turkey's referendum would deeply alter the legal system, which foes say helps the ruling party stay in power, By Evan Hill, 13 Sep 2010, <https://www.aljazeera.com/news/2010/9/13/major-reforms-cast-as-a-power-grab> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>11</sup> Adding injustice to injury, one year on from the Gezi Park protests in Turkey, Amnesty International, published in 2014, <https://www.amnesty.org/download/Documents/8000/eur440102014en.pdf> (այցելվել է 31.03.2021թ.):



լրագրողների նկատմամբ ամենաանհանդուրժող երկիրը<sup>12</sup>, սակայն դա որևէ կերպ չի ազդում Թուրքիայի իշխող կուսակցության վարքագծի վրա: Ընդհակառակը, այս իրադարձություններից հետո **Էրդողանը ինտենսիվ հակաքարոզչություն սկսեց Թուրքիայում մեծ լսարան ունեցող ընդդիմադիր ու չեզոք լրատվամիջոցների դեմ և ի վերջո Թուրքիայի գրեթե ողջ լրատվական դաշտը մոնոպոլացվեց իշխող կուսակցության և նրա սպասարկուների կողմից**<sup>13</sup>:

Վերոհիշյալ գործընթացների արդյունքում 2014-ին Էրդողանը պաշտոնապես դուրս եկավ իշխող կուսակցությունից և ստանձնեց անկուսակցական նախագահի պաշտոնը՝ կուսակցության առաջնորդությունը հանձնելով վարչապետին<sup>14</sup>: Իրականում Էրդողանը պահպանեց և ավելի ամրապնդեց իր ազդեցությունը ինչպես կառավարության, այնպես էլ կուսակցության որոշումների կայացման գործընթացի նկատմամբ: Թուրքիայի ներքաղաքական կյանքում Էրդողանի քաղաքական գերակայությունը ավելի ամրապնդվեց, իսկ հիմնական պետական ինստիտուտների դերը զգալիորեն կրճատվեց: **Էրդողանի հռչակած «Նոր Թուրքիայում»<sup>15</sup> (Հերթական տարօրինակ զուգադիպությունը մեր հետհեղափոխական իրականության և այսպես կոչված «Նոր Հայաստանի» հետ), որը իբր պետք է ավելի ժողովրդավար և ժամանակակից լիներ՝ կոնսոլիդացված հասարակությամբ, իրականում «ժողովրդավարության» գաղափարի ստվերում ընթանում էին երկրում ավտորիտար համակարգի ամրապնդման, հասարակության բևեռացման և ազգայնականության վերելքի գործընթացներ:**

Ինչպես նկատում ենք, Էրդողանը և նրա գլխավորած ԱԶԿ-ը Թուրքիայում իշխանությունը ստանձնելուց հետո աստիճանաբար վերահսկողություն սահմանեցին ԶՈՒ-ի, դատական համակարգի, մամուլի և քաղհասարակության նկատմամբ: Դրանից հետո Էրդողանը որոշեց ավելի ամրապնդել իր ավտորիտար իշխանությունը՝ ամուր գործադիր նախագահական ինստիտուտը կենտրոնացնելով սեփական ձեռքերում: 2015թ. հունիսին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների

<sup>12</sup> Record number of journalists jailed as Turkey, China, Egypt pay scant price for repression, Committee to Protect Journalists, December 13, 2017, <https://cpj.org/reports/2017/12/journalists-prison-jail-record-number-turkey-china-egypt/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>13</sup> Erdogan's election rivals struggle to be heard in Turkey's media, By Ece Toksabay, Ali Kucukgocmen, June 20, 2018, <https://www.reuters.com/article/us-turkey-election-media-idUSKBN1JG23Z> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>14</sup> Ahmet Davutoglu, Turkey's foreign minister, to 'succeed' Erdogan, Wed 27 Aug 2014, <https://www.theguardian.com/world/2014/aug/27/turkey-foreign-minister-ahmet-davutoglu-succeed-erdogan> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>15</sup> What exactly is the 'New Turkey?', al-monitor, August 26, 2014, <https://www.al-monitor.com/pulse/originals/2014/08/turkey-erdogan-new-turkey-religious-conservatives.html> (այցելվել է 31.03.2021թ.):

արդյունքում ԱԶԿ-ը կորցրեց խորհրդարանական մեծամասնությունը, մինչդեռ Էրդողանը հույս ուներ խորհրդարանում 2/3 մեծամասնություն ստանալ և խորհրդարանի միջոցով ապահովել սահմանադրական փոփոխություններն ու անցումը գործադիր նախագահական համակարգի:

Վերոհիշյալ հանգամանքը, ինչպես նաև ընտրություններից հետո կոալիցիոն կառավարություն կազմելու վերաբերյալ բանակցությունների ձախողումը և արտահերթ ընտրությունների նշանակումը Էրդողանին ստիպեցին որոշ մարտավարական փոխակերպումներ կատարել: **Նախնական հարցումները ցույց էին տալիս, որ այդ շրջանում Քրդական աշխատավորական կուակցության (ՔԱԿ-ՔԿԿ) նկատմամբ Էրդողանի համեմատաբար լիբերալ քաղաքականությունը ոչ այնքան նրան ապահովում էր քրդական ու լիբերալ շրջանակների լրացուցիչ ձայներով, որքան հանգեցնում էր ձայների կորստի ազգայնական ճամբարում, որտեղ այդ ձայները հաջողությամբ յուրացնում էր «Ազգայնական շարժում» կուակցությունը (ԱՇԿ-ՄԻՔ): Հետևաբար Էրդողանը կոշտացրեց հակաքրդական հռետորաբանությունը և ազգայնական տրամադրությունների համատեքստում փորձեց վերականգնել կորսված դիրքերը:** Հարկ է նշել, որ 2015-ին Էրդողանը մեծապես հազուրդ տվեց իր ազգայնամոլ ձգտումներին՝ նաև կապված Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների հետ, երբ այն ստվերելու համար ապրիլի 24-ին մեծ շուքով նշեց Գալիպոլի ճակատամարտի հիշատակը: Ի վերջո, 2015թ. նոյեմբերին տեղի ունեցած արտահերթ ընտրությունների արդյունքում ԱԶԿ-ը կարողացավ վերականգնել խորհրդարանական մեծամասնությունը<sup>16</sup>:

Ուշագրավ է, որ **Էրդողանը ազգայնական խաղաքարտը օգտագործել էր նաև նախկինում տեղի ունեցած ընտրությունների ժամանակ:** Օրինակ, 2011թ. հունիսի ընտրություններից առաջ Էրդողանի անմիջական հրահանգով քանդվեց հայ-թուրքական սահմանի մոտակայքում գտնվող «Մարդկության հուշարձանը»<sup>17</sup>: 2009-ին տեղադրված հուշարձանը խորհրդանշում էր հայ-թուրքական հաշտեցման գործընթացը, ուստի պատահական չէ, որ դրա ապամոնտաժման գործընթացը սկսեց 2011-ի ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, երբ արդեն ակնհայտ էր, որ Անկարան հայ-թուրքական հաշտեցման գործընթացը մտցրել էր

<sup>16</sup> Turkey's AK party wins back majority in snap election, by Umut Uras, 2 Nov 2015, <https://www.aljazeera.com/news/2015/11/2/turkeys-ak-party-wins-back-majority-in-snap-election> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>17</sup> Turkey-Armenia friendship symbol being demolished, BBC, 26 April 2011, <https://www.bbc.com/news/world-europe-13199787> (այցելվել է 31.03.2021թ.), Where Friendship Goes To Die: Turkey's Razed Statue Of Humanity, By Amos Chapple, October 25, 2016, <https://www.rferl.org/a/turkey-armenia-razed-statue-of-humanity/28074181.html> (այցելվել է 31.03.2021թ.):

փակուղի: Առհասարակ, Թուրքիայում իշխող կուսակցության կողմից ներքաղաքական նպատակներով ազգայնական գաղափարների շահարկումը պարբերաբար արտացոլվում է ոչ միայն ներքին գործընթացներում, այլև արտաքին քաղաքականության մեջ, որին ավելի մանրամասն կանդրադառնանք վերլուծության հաջորդ բաժնում:

## 1.2. 2016թ. ռազմական հեղաշրջման փորձը և Էրդողանի ավտորիտար իշխանության վերջնական ամրապնդումը

Թուրքիայի ներքաղաքական գործընթացներում անկյունաքարային նշանակություն ունեցավ 2016թ. ռազմական հեղաշրջման ձախողված փորձը: 2016թ. հուլիսի 15-ին Թուրքիայի զինված ուժերի մի հատվածի կողմից կազմակերպվեց որոշակի առումով լավ պլանավորված, սակայն բավական հապճեպ իրականացված հեղաշրջման փորձ: Դրա շրջանակներում Անկարայում և Ստամբուլում իրականացվեց համատեղ ցամաքային և օդային հարձակում, իսկ հրամանատարական մի խումբ փորձեց կազմակերպել նախագահ Էրդողանի ձերբակալությունը, ով այդ պահին գտնվում էր արձակուրդում<sup>18</sup>: Ստամբուլում ԶՈՒ ցամաքային ուժերը փակել էին Բոսֆորի կամուրջները և նույնիսկ կրակ բացել այն քաղաքացիների վրա, ովքեր Էրդողանի հորդորով դուրս էին եկել զինվորականների դեմ: Ռազմաօդային ուժերը հարվածներ էին հասցրել Թուրքիայի խորհրդարանի և ազգային հետախուզական ծառայության շենքերին:

Տարբեր աղբյուրների հավաստմամբ հեղաշրջման փորձը շատ հապճեպ էր կազմակերպվել, քանի որ դրա հեղինակները տեղեկացել էին Թուրքիայի զինված ուժերում Գյուլենական շարժման հետևորդների նկատմամբ լրտեսության մեղադրանքով կառավարության կողմից ծրագրված զանգվածային ձերբակալությունների մասին: Մասնավորապես, զինվորականները տեղեկացել էին, որ Էրդողանը հավանություն էր տվել զինվորականներին մինչև օգոստոսի 1-4-ը սպասվող Բարձրագույն ռազմական խորհրդի հանդիպումը ձերբակալելու մասին դատախազի ծրագրին, և սպասվում էր, որ հանդիպման ժամանակ ԶՈՒ շարքերում էական զտումներ էին իրականացվելու<sup>19</sup>:

<sup>18</sup> Inside a failed coup and Turkey's fragmented military, Aaron Stein, July 20, 2016, <https://warontherocks.com/2016/07/the-coup-operation-and-turkeys-fractured-military/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>19</sup> Why Turkey's coup didn't stand a chance, al-monitor, Metin Gurcan, July 17, 2016, <https://www.al-monitor.com/pulse/originals/2016/07/turkey-kamikaze-coup-attempt-fails.html> (այցելվել է 31.03.2021թ.):

Հեղաշրջման փորձը ձախողվեց, քանի որ նախ Էրդողանին հաջողվեց արագ մոբիլիզացնել իր աջակիցների քաղաքացիական ռեսուրսը և այն ուղղել իր դեմ դուրս եկած զինվորականների դեմ, բացի այդ ՂՈՒ-ի վերնախավը պահպանեց Էրդողանի նկատմամբ հավատարմությունը: Հեղաշրջման փորձի արդյունքում մոտ 300 զոհ եղավ, որից ավելի քան 100-ը՝ հեղաշրջման փորձի մասնակիցների շրջանում, միաժամանակ 1400-ից ավելի քաղաքացիներ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացան<sup>20</sup>: Հեղաշրջման ձախողված փորձը Էրդողանը անմիջապես վերագրեց Ֆեթուլլահ Գյուլենին և վերջինիս գաղափարակիցների նկատմամբ զանգվածային բռնաճնշումներ ու ձերբակալություններ նախաձեռնեց:

Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության և Գյուլենի ու նրա հետևորդների միջև հակասությունները նկատելի դարձան դեռևս 2011-ին, երբ խորհրդարանական ընտրություններից առաջ ԱԶԿ-ը իր ընտրական ցուցակից դուրս թողեց տասնյակ գյուլենականների՝ փորձելով կանխել Թուրքիայում Գյուլենական շարժման՝ որպես մրցակից քաղաքական ուժային կենտրոնի ձևավորումը<sup>21</sup>: Հետագայում կողմերի միջև հակասությունները միայն խորացան. Գյուլենը կտրուկ դեմ հանդես եկավ Քրդական աշխատավորական կուսակցության հետ Օսլոյում ընթացող գաղտնի բանակցություններին: Հակասություններ կային նաև արտաքին քաղաքական բնագավառում. մասնավորապես, գյուլենականները Իրանի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում կառավարության քաղաքականությանը հավանություն չէին տալիս, համաձայն չէին ռուսական ուղղությամբ վարվող քաղաքականության հետ: Հարաբերությունները առավել սրվեցին, երբ 2013-ին Էրդողանը հայտարարեց գյուլենական կրթական կենտրոնները փակելու՝ կառավարության մտադրության մասին<sup>22</sup>:

Հեղաշրջման անհաջող փորձից որոշ ժամանակ անց Թուրքիայում մտցվեց արտակարգ դրություն, որը այնուհետև եռամսյա հաճախականությամբ 7 անգամ

<sup>20</sup> Turkey coup arrests hit 6,000 as Erdogan roots out 'virus', BBC, 17 July 2016, <https://www.bbc.com/news/world-europe-36818401> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>21</sup> The Big Split: the Differences That Led Erdogan and the Gulen Movement to Part Ways, By M. Kemal Kaya and Svante E. Cornell, 05 March 2012, <https://www.turkeyanalyst.org/publications/turkey-analyst-articles/item/296-the-big-split-the-differences-that-led-erdogan-and-the-gulen-movement-to-part-ways.html> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>22</sup> Erdoğan in Trouble: A Series of Resignations in the Erdoğan Government Marred by Corruption, Bayram Balci, 30.12.2013, <https://carnegie.ru/commentary/54044> (այցելվել է 31.03.2021թ.), The Gülen Movement and Turkish Soft Power, Bayram Balci, February 04, 2014 <https://carnegieendowment.org/2014/02/04/gulen-movement-and-turkish-soft-power-pub-54430> (այցելվել է 31.03.2021թ.):



երկարացվեց ու չեղարկվեց միայն 2 տարի անց՝ 2018-ի ամռանը<sup>23</sup>: Այդ ընթացքում էրդողանը աննախադեպ բռնաճնշումներ նախաձեռնեց քաղաասարակության, ՋԼՄ-ների, իր քաղաքական հակառակորդների և զինվորականների նկատմամբ: Փորձագետների գնահատմամբ, միայն մինչև 2017թ. հուլիսը՝ մեկ տարվա ընթացքում գյուլենականների և նրանց համակիրների հետ փոխկապակցված շուրջ 1000 կազմակերպություններից իշխանությունները խլել էին շուրջ 11 մլրդ դոլարի ակտիվներ<sup>24</sup>:

2019թ. մարտ ամսվա դրությամբ հեղաշրջման փորձի հետ կապված՝ Թուրքիայում աշխատանքից հեռացվել էր ավելի քան 150 հազար անձ, այդ թվում՝ քաղճառայողներ, զինվորականներ, ակադեմիկոսներ և ուսուցիչներ. միայն պաշտոնանկ արված դատավորների ու դատախազների թիվը գերազանցում էր 4000-ը: Ընդհանուր առմամբ, այդ ընթացքում քրեական հետապնդում է իրականացվել ավելի քան 500 հազար անձի նկատմամբ, ձերբակալվածների թիվը գերազանցում է 96 հազարը, փակվել են ավելի քան 3000 կրթական հաստատություններ, մոտ 200 լրատվամիջոց, ինչպես նաև ձերբակալվել ավելի քան 300 լրագրող<sup>25</sup>:

Հեղաշրջման անհաջող փորձից անմիջապես հետո զանգվածային զտումներ իրականացվեցին ՋՈՒ-ի բարձրաստիճան սպաների շրջանում: Թուրքիայի ՋՈՒ ցամաքային, ռազմածովային և ռազմաօդային ուժերում գործող 325 գեներալներից շուրջ 150-ը կամ բարձրագույն սպայակազմի 46%-ը պաշտոնանկ արվեց կամ ուղարկվեց պահեստազոր<sup>26</sup>: Կրճատումները իրականացվում էին նաև միջին սպայական օղակում. հեղաշրջման փորձից 7 ամիս անց գործող սպայական անձնակազմի գրեթե 20%-ը կրճատվել էր՝ վերջիններիս թիվը 32,5 հազարից կրճատվել էր մինչև 25,7 հազար: Ընդ որում, աշխատանքից ազատվել էր ՋՈՒ շտաբային սպաների 77%-ը կամ մոտ 1400 սպա<sup>27</sup>: Ըստ Թուրքիայի պաշտպանության նախարար Հուլուսի Աքարի ներկայացրած տվյալների՝ 2018թ. դեկտեմբերի դրությամբ

<sup>23</sup> Turkey's emergency rule expires as Erdogan's powers expand, By Gulsen Solaker, Ece Toksabai, JULY 18, 2018, <https://www.reuters.com/article/us-turkey-security/turkeys-emergency-rule-expires-as-erdogans-powers-expand-idUSKBN1K824E> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>24</sup> Assets worth \$11bn seized in Turkey crackdown, Financial Times, Mehul Srivastava, July 7, 2017, <https://www.ft.com/content/fed595d0-631e-11e7-8814-0ac7eb84e5f1> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>25</sup> Turkey's post-coup crackdown since July 15, 2016 as of March 4, 2019, Turkey purge, <https://turkeypurg.com/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>26</sup> Turkish military purges decimate career officer, pilot ranks, Metin Gurcan, Al-Monitor, May 25, 2018, <https://www.al-monitor.com/originals/2018/05/turkey-military-purges-career-officer-pilot.html> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>27</sup> Turkish military purges decimate career officer, pilot ranks, Metin Gurcan, Al-Monitor, May 25, 2018, <https://www.al-monitor.com/originals/2018/05/turkey-military-purges-career-officer-pilot.html> (այցելվել է 31.03.2021թ.):

Գյուլենական շարժման հետ փոխկապակցված լինելու պատրվակով ՋՈՒ-ի անձնակազմից հեռացումների թիվը կազմում էր ավելի քան 15 հազար, որից մոտ 7,6 հազարը սպայական անձնակազմից, իսկ նրանցից 150-ը՝ գեներալներ կամ ծովակալներ<sup>28</sup>:

Էրդողանը ՋՈՒ-ում իրականացրեց նաև մի շարք կառուցվածքային փոփոխություններ: Մասնավորապես, դեռևս **2016թ. հուլիսի 31-ին հրապարակված արտակարգ իրավիճակի մասին հրամանագրով ՋՈՒ ցամաքային, ծովային և օդային ուժերի հրամանատարները անմիջապես անցան պաշտպանության նախարարի ենթակայության տակ**, իսկ նախագահն ու վարչապետը իրավունք ստացան առանց երրորդ պաշտոնյայի միջնորդության անմիջապես տեղեկություններ ստանալ վերջիններիցս, ինչպես նաև ուղիղ հրամաններ տալ նրանց<sup>29</sup>: Այդ հրամանագրի շրջանակներում փոփոխություններ կատարվեցին նաև Բարձրագույն ռազմական խորհրդի (ԲՌԽ) կազմում. ԲՌԽ-ի անդամներ դարձան նաև փոխվարչապետները, արդարադատության, ներքին և արտաքին գործերի նախարարները, իսկ զինվորական անդամներից իրենց տեղը պահպանեցին միայն ԳՇ պետը, ՌԾՈՒ, ՑՁ և ՌՕՈՒ հրամանատարները: Խորհրդի քարտուղարությունը վերցվեց ԳՇ պետի տեղակալից ու հանձնվեց ՊՆ-ին<sup>30</sup>:

Այսպիսով **Բարձրագույն ռազմական խորհուրդը լիարժեքորեն հայտնվեց քաղաքական վերահսկողության ներքո՝** քաղաքացիական անդամների թիվը 2-ից դարձավ 10, իսկ զինվորականների թիվը 12-ից դարձավ 4: ԲՌԽ-ը հանդիսանում է Թուրքիայի ռազմական քաղաքականության մշակման ու հստակեցման, ռազմական ոլորտում կադրային քաղաքականության ձևավորման բարձրագույն հարթակը, որը նոր օրենքով ամբողջությամբ անցավ նախագահի և կառավարության լիակատար վերահսկողության տակ: Փաստորեն, Էրդողանը բարձրագույն զինվորականությանը զրկեց նաև ռազմական շինարարության գործընթացի վրա ազդելու հնարավորությունից:

<sup>28</sup> Turkey remands in custody 118 soldiers over suspected FETÖ links, December 18, 2018, <https://www.hurriyetdailynews.com/turkey-remands-in-custody-118-soldiers-over-suspected-feto-links-139811> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>29</sup> Turkish gov't introduces new decree law to overhaul army, July 31, 2016, <https://www.hurriyetdailynews.com/turkish-govt-introduces-new-decree-law-to-overhaul-army-102281> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>30</sup> Turkish gov't introduces new decree law to overhaul army, July 31, 2016, <https://www.hurriyetdailynews.com/turkish-govt-introduces-new-decree-law-to-overhaul-army-102281> (այցելվել է 31.03.2021թ.):

Ուշագրավ է, որ ռազմական հեղաշրջման փորձից հետո Թուրքիայում փոխվեցին ոչ միայն ՁՈՒ ցամաքային, ծովային և օդային ուժերի հրամանատարները, այլև 1-ին և 2-րդ բանակային կորպուսների հրամանատարները: Էրդողանը վերահսկողություն սահմանեց նաև Ժանդարմերիայի և առափնյա պահպանության հրամանատարության նկատմամբ, որոնք անցան ներքին գործերի նախարարության ենթակայության տակ՝ ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական իրավիճակում: Ստեղծվեց Ազգային պաշտպանության համալսարանը, որը իր ենթակայության տակ վերցրեց Թուրքիայի ՁՈՒ-ի ողջ կրթական համակարգը<sup>31</sup>:

Էրդողանը նաև զգալիորեն սահմանափակեց զինվորականների ազդեցությունը Ազգային անվտանգության խորհրդում (ԱԱԽ)<sup>32</sup>, որտեղ վերջիններս նախքան հեղաշրջման փորձը քանակական գերակշռություն ունեին: Փոփոխությունների արդյունքում ԱԱԽ անդամներն են երկրի նախագահը (խորհրդի նախագահ), վարչապետը, ԳՇ պետը, փոխվարչապետները, արդարադատության, պաշտպանության, ներքին և արտաքին գործերի նախարարները, ՅԶ, ՌՕՈՒ, ՌԾՈՒ հրամանատարները<sup>33</sup>:

Այսպիսով, 2016-ին ՁՈՒ հիմնականում միջին հրամանատարական փոքրաթիվ կազմի կողմից նախաձեռնված **ռազմական հեղաշրջման փորձն օգտագործելով՝ Էրդողանը բարձրաստիճան զինվորականությանը ամբողջությամբ զրկեց երկրի ներքին, արտաքին և նույնիսկ ռազմական քաղաքականության վրա որոշիչ ազդեցություն ունենալու բոլոր լծակներից**: Նա ավելի ամրապնդեց իր ազդեցությունը դատական, կրթական և մյուս կարևոր պետական համակարգերի նկատմամբ, և հաջորդ քայլն արդեն ուղղված էր գործադիր նախագահական համակարգի ամրապնդմանը:

Դեռևս 2011թ. խորհրդարանական ընտրություններից հետո Թուրքիայում որոշում կայացվեց ձևավորել սահմանադրական փոփոխությունների հանձնաժողով, որտեղ իշխող ԱԶԿ-ը ակտիվորեն պաշտպանում էր նախագահական կառավարման

<sup>31</sup> Splitting gendarmerie from Turkish army: reform or bad timing?, Metin Gurcan, Al-Monitor, November 3, 2014, <https://www.al-monitor.com/pulse/originals/2014/11/turkey-separating-gendarmerie-from-turkish-army.html> (այցելվել է 31.03.2021թ.), What Turkey can learn from Russia about coup-proofing the military, Mark Galeotti, August 2, 2016, <https://warontherocks.com/2016/08/what-turkey-can-learn-from-russia-about-coup-proofing-the-military/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>32</sup> Erdogan Takes Total Control of “New Turkey”, Bulent Aliriza, The Center for Strategic and International Studies (CSIS), July 18, 2018, <https://www.csis.org/analysis/erdogan-takes-total-control-new-turkey> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>33</sup> Republic of Turkey Secretariat-General of The National Security Council, About, <https://www.mgk.gov.tr/en/index.php/secretariat-general/about-us> (այցելվել է 31.03.2021թ.):

համակարգի անցման գաղափարը, սակայն 2016-ին այդ հանձնաժողովը լուծարվեց, երբ գաղափարը մերժվեց Հանրապետական ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) կողմից: Իշխող կուսակցությունը փորձեց միայնակ կյանքի կոչել սահմանադրական փոփոխությունները, սակայն խորհրդարանում այն անցկացնելու համար չունենալով պատգամավորների անհրաժեշտ 2/3-ի աջակցությունը, որոշեց անցկացնել հանրաքվեի միջոցով: Ի վերջո, 2016-ի անհաջող ռազմական հեղաշրջման փորձից հետո ընդդիմադիր «Ազգայնական շարժում» կուսակցության առաջնորդ Դելեթ Բահչելին իր աջակցությունը հայտնեց գործադիր նախագահական համակարգին անցում կատարելու ծրագրին՝ պայմանով, որ Սահմանադրության՝ աշխարհիկությունն ու քեմալական ազգայնականությունը երաշխավորող առաջին 4 հոդվածները մնան անփոփոխ<sup>34</sup>:

Կա նաև վարկած, որ Բահչելիի աջակցությունը պայմանավորված է եղել նաև նրանով, որ պետական ապարատում կրճատումների արդյունքում ազատված շուրջ 60 հազար հաստիքները Էրդողանը խոստացել էր լրացնել նաև ԱՇԿ-ի ներկայացուցիչներով՝ այդ թվում պաշտպանության, առողջապահության, ներքին գործերի նախարարություններում: Արդյունքում Բահչելին ոչ միայն աջակցեց սահմանադրական փոփոխություններին, այլև իր հետ փոխկապակցված ծայրահեղ ազգայնական կառույցների, օրինակ «Գորշ գայլերի» միջոցով աջակցում էր Էրդողանի մարդաշատ հանրահավաքների կազմակերպմանը:

Սահմանադրական հանրաքվեն անցկացվեց և ձայների չնչին տարբերությամբ հավանության արժանացավ 2017թ. ապրիլին՝ արտակարգ դրության, ՋԼՄ-ների և ուժային կառույցների նկատմամբ իշխող կուսակցության կատարյալ վերահսկողության պայմաններում<sup>35</sup>: Հանրաքվեի արդյունքում վերացվեց վարչապետի պաշտոնը, որի լիազորությունները անցան նախագահին: Նախագահը նկատելիորեն ավելացրեց իր ազդեցությունը դատական համակարգում, Սահմանադրական դատարանում, կրճատվեց խորհրդարանի լիազորությունները, իսկ Էրդողանը հնարավորություն ստացավ պաշտոնավարել մինչև 2029-ը, իսկ որոշակի իրավական «աճապարարության» պայմաններում՝ ընդհուպ մինչև 2034-ը: Միաժամանակ Էրդողանը հնարավորություն ստացավ կրկին ստանձնելու իշխող


<sup>34</sup> Erdoğan's Proposal for an Empowered Presidency, By Alan Makovsky, March 22, 2017, <https://www.americanprogress.org/issues/security/reports/2017/03/22/428908/erdogans-proposal-empowered-presidency/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>35</sup> REPUBLIC OF TURKEY CONSTITUTIONAL REFERENDUM 16 April 2017, OSCE/ODIHR Limited Referendum Observation Mission, Final Report, 22 June 2017, <https://www.osce.org/files/f/documents/6/2/324816.pdf> (այցելվել է 31.03.2021թ.):



կուսակցության ղեկավարությունը և ամրապնդելու իր դիրքերը կուսակցական քաղաքականության հարցերում<sup>36</sup>:

2017-ի ապրիլի 18-ին Թուրքիայում տեղի ունեցած Սահմանադրական հանրաքվեի արդյունքները



Աղբյուրը՝ "Թուրքիայի հանրաքվեն. թվեր, որ շատ խոսում են", BBC news, ապրիլի 17, 2017

Ազգայնական ուժերի հետ համագործակցության խորացմանը զուգահեռ, Էրդողանը մեծացնում էր ճնշումը աշխարհիկ և քրդամետ ուժերի նկատմամբ: Ըստ որոշ տվյալների՝ միայն 2015-2017 թվականներին ձերբակալվել է քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցության (ԺԴԿ) շուրջ 2700 անդամ<sup>38</sup>, այդ թվում՝ կուսակցության համանախագահ Սալահաթթին Դեմիրթաշը և խորհրդարանի և 12 պատգամավորներ<sup>39</sup>: Այս մարտավարությունը Էրդողանին օգնեց ամրապնդելու իշխանությունը և ազատվելու գրեթե բոլոր լուրջ քաղաքական մրցակիցներից: Միաժամանակ քրդամետ կուսակցության ներկայությունը խորհրդարանում

<sup>36</sup> The Turkish constitutional referendum, explained, Sinan Ekim and Kemal Kirişci, April 13, 2017, <https://www.brookings.edu/blog/order-from-chaos/2017/04/13/the-turkish-constitutional-referendum-explained/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>37</sup> Turkey referendum: The numbers that tell the story, BBC, 17 April 2017, <https://www.bbc.com/news/world-europe-39619354> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>38</sup> Prosecutor seeks life sentence for HDP co-chair, Rudaw, 12-01-2017 <https://www.rudaw.net/english/middleeast/turkey/12012017> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>39</sup> Pro-Kurdish opposition leader's trial opens in Turkey, By Ece Toksabay, December 7, 2017 <https://www.reuters.com/article/idCAKBN1E112B-OCATP?edition-redirect=ca> (այցելվել է 31.03.2021թ.):

Էրդողանին հնարավորություն էր տալիս միջազգային հարթակներում ստեղծել պատրանք, թե իբր Թուրքիայում քրդերի և մյուս ազգային փոքարամասնությունների ձայնը լսելի է<sup>40</sup>: Հարկ է նշել, որ Թուրքիայի իշխանությունների կողմից այս հանգամանքի կարևորումը վերջին տարիներին նվազագույնի է հասել, ազգայնական ներքին և արտաքին քաղաքականության համատեքստում Թուրքիայի իշխանությունները այլևս էթնիկ «հանդուրժողականությունը» չեն դիտարկում որպես լուրջ խաղաքարտ, հետևաբար քրդերի, այդ թվում՝ ԺԴԿ-ի նկատմամբ ճնշումները հետզհետե ավելանում են:

Այսպիսով, 2016-ին տեղի ունեցած անհաջող հեղաշրջման փորձից հետո Էրդողանի դիրքերն էապես ամրապնդվեցին, իսկ «Արդարություն և զարգացում» կուսակցությունն ավելի ազգայնական քաղաքական կուրս որդեգրեց: Էրդողանը վերջնականապես կասեցրեց Քրդական աշխատավորական կուսակցության հետ խաղաղ գործընթացը, ամրապնդեց համագործակցությունը «Ազգայնական շարժում» կուսակցության և վերջինիս առաջնորդ Դելթե Բահչելիի հետ, ով ի վերջո դարձավ Էրդողանի կարևոր դաշնակիցը ինչպես 2017-ի սահմանադրական հանրաքվեի, այնպես էլ 2018-ի նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ<sup>41</sup>: Սահմանադրական փոփոխություններն ու 2018-ի ընտրությունները Էրդողանին հնարավորություն տվեցին զգալիորեն սահմանափակել օրենսդիր և դատական մարմինների լիազորությունները<sup>42</sup>:

Սահմանադրական հանրաքվեից հետո Թուրքիայի ներքաղաքական գործընթացների ամենախորհրդավոր դրվագներից մեկը 2017թ. հունիս-հուլիսին տեղի ունեցած այսպես կոչված «արդարության երթընթաց» էր, որը շուրջ մեկ ամսվա ընթացքում կարողացավ մոբիլիզացնել աննախադեպ քանակի ցուցարարներ, սակայն քաղաքական տեսանկյունից որևէ լուրջ արդյունք չգրանցեց: 2017-ի հունիսի 15-ին Հանրապետական ժողովրդական կուսակցության (ՀԺԿ-CHP) առաջնորդ Քեմալ Քըրըչդարողլուի նախաձեռնությամբ Անկարայում մեկնարկեց այսպես կոչված «արդարության երթընթաց», որի նպատակն էր ընդդիմության բողոքի ձայնը բարձրացնել

<sup>40</sup> Questions and bitter truths in a hazy post-election landscape, Yavuz Baydar, Jun 28 2018, <https://ahvalnews.com/2018-elections/questions-and-bitter-truths-hazy-post-election-landscape#> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>41</sup> Turkey's right-wing alliance bolsters ruling party and divides MHP, By Arwa Ibrahim, 7 March 2017, <https://www.middleeasteye.net/news/turkeys-right-wing-alliance-bolsters-ruling-party-and-divides-mhp> (այցելվել է 31.03.2021թ.), AKP, MHP to press button for 'People's Alliance', February 20 2018, <https://www.hurriyetdailynews.com/akp-mhp-to-press-button-for-peoples-alliance-127628> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>42</sup> Turkey's powerful new executive presidency, By Reuters Staff, June 22, 2018, <https://www.reuters.com/article/us-turkey-election-factbox-idUSKBN1J1O1> (այցելվել է 31.03.2021թ.):

Թուրքիայում 2016-ի իրադարձություններից հետո տեղի ունեցող քաղաքական ձեռքարկությունների ու հաշվեհարդարների, արտակարգ դրության պահպանման և այդ պայմաններում անցկացված սահմանադրական հանրաքվեի դեմ: Անկարայից դեպի Ստամբուլ ընդհանուր 450 կմ երկարությամբ այս երթը սկզբնական փուլում սակավամարդ էր, սակայն երթի ընթացքում միացան տասնյակ հազարավոր քաղաքացիներ և ի վերջո հուլիսի 9-ին Ստամբուլում տեղի ունեցած եզրափակիչ հանրահավաքի ժամանակ մասնակիցների թիվը ըստ տարբեր գնահատականների՝ հասավ մի քանի հարյուր հազարից մինչև 2 միլիոնի<sup>43</sup>: Չնայած գեներացրած հսկայական մասնակցությանը, շարժումը կարճ ժամանակ անց մարեց և որևէ էական քաղաքական հետևանք չունեցավ:

Ըստ տարբեր վարկածների՝ Քըլլըչդարողլուի նախաձեռնած երթը ուղղորդվում էր արևմուտքի կողմից և նպատակ ուներ Էրդողանից որոշ զիջումներ կորզել, և ի վերջո այն ավարտվել է հենց արևմուտքի միջնորդությամբ: Կա նաև տեսակետ, որ Էրդողանի բավականին լոյալ վերաբերմունքը այդ քայլերի նկատմամբ, միայն հայտարարություններով սահմանափակվելն ու ուժի կիրառումից խուսափելը, ինչպես նաև երթի տարօրինակ ավարտը կարող են վկայել այն մասին, որ իրականում այն նպատակ է ունեցել պարպելու 2016-ից հետո երկրում ստեղծված թեժ ներքաղաքական մթնոլորտը: **Ամեն դեպքում, Հայաստանի համար այս իրադարձությունները հետաքրքրական են նաև նրանով, որ առկա են որոշակի նմանություններ և զուգահեռություններ 2018-ի գարնանը Հայաստանում տեղի ունեցած ներքաղաքական գործընթացների հետ:**

2017թ. Թուրքիայում տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունները ամբողջությամբ ուժի մեջ մտան 2018-ի հունիսի 24-ին՝ դեռևս պահպանվող արտակարգ դրության պայմաններում անցկացված նախագահական և խորհրդարանական ընտրություններից հետո: Թեև ընտրությունները պետք է անցկացվեին 2019-ին, սակայն 2018-ի ապրիլի 18-ին ԱՇԿ առաջնորդ Բահչելիի հետ հանդիպումից հետո Էրդողանն անակնկալ հայտարարեց ընտրությունները հունիսի 24-ին անցկացնելու որոշման մասին: **Վերջինս իր որոշումը և կառավարման համակարգի շուտափույթ փոփոխությունը պայմանավորեց տարածաշրջանային մարտահրավերներին արձագանքելու անհրաժեշտությամբ՝ նկատի ունենալով առաջին հերթին քրդական խնդիրը<sup>44</sup>, ինչպես նաև տարածաշրջանում տեղի**

<sup>43</sup> Turkish Opposition Leader Ends 25-Day March With Istanbul Rally, Y Jared Malsin, July 9, 2017, <https://time.com/4850745/istanbul-turkey-opposition-rally/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>44</sup> Erdogan catches Turkey off guard by calling early elections, By Suzan Fraser, April 18, 2018, <https://apnews.com/article/2166dec0b9e042ed85fba7445ac07e22> (այցելվել է 31.03.2021թ.):

ունեցող մյուս զարգացումները, այդ թվում՝ Սիրիայում, Հարավային Կովկասում և այլն: Հարկ է հիշել, որ այդ փուլում Հայաստանում բուռն ներքաղաքական գործընթացներ էին տեղի ունենում, և ինչպես ցույց տվեց իրադարձությունների հետագա ընթացքը, Թուրքիան առնվազն անտարբեր չէր դրանց նկատմամբ: Փաստորեն, Էրդողանը շտապում էր կայունացնել Թուրքիայի ներքաղաքական իրավիճակը և վերջնականապես ամրապնդել իր դիրքերը՝ տարածաշրջանում սպասվող բուռն զարգացումներին ընդառաջ:

Ուշագրավ է, որ 2018թ. արտահերթ ընտրությունների ժամանակ Էրդողանի հիմնական հակառակորդ, ՀԺԿ ղեկավար և 2017-ի հայտնի երթի առաջնորդ Քըլլեչդարողլուն դուրս եկավ նախագահական պայքարից՝ տեղը զիջելով ՀԺԿ պատգամավոր Մուհարեմ Ինչեհին: Չնայած հոռետեսական կանխատեսումներին՝ Էրդողանը նախագահական ընտրություններում հավաքեց 52,6% ձայն և հաղթեց առաջին փուլում: Այլ պատկեր էր խորհրդարանական ընտրություններում. իշխող ԱԶԿ-ը ստացավ խորհրդարանի մանդատների շուրջ 49%-ը, իսկ վերջինիս կոալիցիոն գործընկեր ԱՇԿ-ը՝ 8%-ը: Այս երկու կուսակցությունները ձևավորեցին «Ժողովրդական այլանսը» և միասին զբաղեցրին պատգամավորական մանդատների 57%-ը: Էրդողանի հիմնական հակառակորդ ընդդիմադիր ՀԺԿ, «Լավ» (İYİ Parti) և «Երջանկություն» (Saadet Partisi) կուսակցությունների դաշինքը՝ «Ազգային այլանսը» ստացավ մանդատների 31,5%-ը: Ինչ վերաբերում է քրդամետ ԺԴԿ-ին, այն ստացավ մանդատների 11%-ը և առայժմ կարողացավ պահպանել քաղաքական ներկայությունը Թուրքիայի խորհրդարանում<sup>45</sup>: Թեև հաշվի առնելով խորհրդարանում ազգայնական ուժերի գերակշիռ մեծամասնությունը՝ ինչպես իշխանության, այնպես էլ հիմնական ընդդիմադիր ուժի շարքերում, ԺԴԿ-ը հայտնվել է մեկուսացված վիճակում և ներքաղաքական գործընթացների վրա որևէ լուրջ ազդեցություն չունի:

Առհասարակ, իշխանությունը կոնսոլիդացնելուն զուգահեռ՝ Էրդողանը կոշտացնում էր նաև ազգայնական և իսլամական հոռետորաբանությունը: Ծայրահեղ ազգայնականության և իսլամական գաղափարների սիմբիոզը Էրդողանը ակնհայտ ի ցույց դրեց դեռևս 2018թ. մարտի 10-ին Մերսինում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ: Վերջինս իր աջակիցներին նախ ողջունեց ծայրահեղ ազգայնական «Գորշ գայլերի» նշանով, այնուհետև «Մահմեդական եղբայրների» հայտնի նշանով<sup>46</sup>: Մինչ այդ էլ Էրդողանը թուրք երիտասարդներին կոչ էր արել ուսումնասիրել պան-

<sup>45</sup> Turkey Elections 2018, Election Results, TRT WORLD, 27.06.2018, <https://www.trtworld.com/elections/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>46</sup> Erdogan marries Turkish ultranationalist salute with that of Muslim Brotherhood, Ari Khalidi 2018/03/10, <https://www.kurdistan24.net/en/story/16067-Erdogan-marries-Turkish-ultranationalist-salute-with-that-of-Muslim-Brotherhood> (այցելվել է 31.03.2021թ.):



իսլամական գաղափարները կրող՝ Թուրքիայի հայտնի «արյունոտ սուլթանի»՝ Աբդուլ Համիդ 2-րդի կյանքը և օսմանյան պատմությունը<sup>47</sup>:



Էրդողանի իշխանության գաղափարախոսական ծայրահեղականացումը շարունակվեց և ավելի ամրապնդվեց 2018թ. ընտրություններում ունեցած հաջողությունից հետո, այն իր արտացոլումը գտավ ինչպես երկրի ներքին կյանքում, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ: Ի վերջո այս գծի շարունակության մեջ պետք է դիտարկել հետագայում Այա Սոֆիայի տաճարի կարգավիճակի փոփոխությունը, քրդամետ ԺԴԿ-ը փակելու կոչերով իշխանությունների կողմից ուղղորդվող վերջին ամիսների արշավը<sup>48</sup>, ագրեսիվ տարածաշրջանային քաղաքականությունը՝ այդ թվում ծայրահեղ իսլամական ուժերի օգտագործումը տարածաշրջանային հակամարտություններում, ինչպես, օրինակ՝ Արցախյան վերջին պատերազմի ժամանակ:

Հատկանշական է, որ որքան Էրդողանը ամրապնդում է Թուրքիայում իր ավտորիտար իշխանությունը, այնքան ավելի են մեծանում նրա սուլթանական նկրտումները, որոնք կյանքի կոչելու համար ամենահարմար հենարանը հենց ազգայնական և իսլամական գաղափարախոսության առաջխաղացումն է: 2019-ին տեղի ունեցած տեղական ընտրությունների արդյունքում Թուրքիայի իշխող

<sup>47</sup> Erdogan Admits that Turkey Is the ‘Continuation’ of the Ottoman Empire, Harut Sassounian, February 20, 2018, <https://armenianweekly.com/2018/02/20/erdogan-admits-turkey-continuation-ottoman-empire/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>48</sup> Turkey plans to shut down pro-Kurdish opposition party - ruling party official, By Reuters Staff, March 2, 2021, <https://www.reuters.com/article/turkey-politics-kurds-int-idUSKBN2AU1TP> (այցելվել է 31.03.2021թ.):

կուսակցության պարտությունը՝ առաջին հերթին Անկարայում և Ստամբուլում, Էրդողանը դիտարկում է որպես 2023-ի ընտրություններին ընդառաջ որոշակի մարտահրավեր: Մասնավորապես, ըստ որոշ կանխատեսումների, 2023-ի ընտրություններում Էրդողանի հիմնական մրցակիցը կարող է դառնալ Ստամբուլի քաղաքապետ Էքրեմ Իմամօղլուն, ով 2019-ի ընտրություններում վստահ հաղթանակ տարավ Թուրքիայի նախկին վարչապետ Բինալի Յըլդըրըմի նկատմամբ<sup>49</sup>:

Սա նշանակում է, որ Էրդողանը շարունակելու է կոնսուլիդացնել իր գաղափարական հենարանը, այդ նպատակով ավելի ագրեսիվ արտաքին և ներքին քաղաքականություն է վարելու, ինչպես նաև փորձելու է ասպարեզից հեռացնել հիմնական քաղաքական հակառակորդներին, ինչպես դա այժմ արվում է քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցության դեմ կազմակերպված արշավի ձևով: Ուշագրավ է, որ Էրդողանը վերջին շրջանում նորից շրջանառության մեջ է դրել նոր սահմանադրական փոփոխությունների գաղափարը<sup>50</sup>, և չի բացառվում, որ կփորձի դա իրականացնել նախքան 2023-ի ընտրությունները:

## 2. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Եթե միջազգայնագետների շրջանում ընդունված է ասել, որ արտաքին քաղաքականությունը ներքին քաղաքականության շարունակությունն է, ապա այսօրվա Թուրքիայի պարագայում կարելի է պնդել, որ արտաքին քաղաքականությունը ուղղակի ներքին քաղաքականության կարևոր գործիքներից մեկն է: Էրդողանի Թուրքիայում կարևոր արտաքին քաղաքական որոշումների հիմքում առաջին հերթին դրված են ներքաղաքական հաշվարկներն ու ծրագրերը, արտաքին քաղաքական տարբեր նախաձեռնություններ հաճախ ուղղակիորեն բխում են Թուրքիայի ներքաղաքական գործընթացներից: Վերջին տասնամյակների ընթացքում Թուրքիայում տեղի ունեցած ներքաղաքական զարգացումները մեծապես ազդել են Անկարայի արտաքին և տարածաշրջանային քաղաքականության վրա, և այսօրվա Թուրքիայի վարքագիծը ճիշտ հասկանալու ու կանխատեսելու

<sup>49</sup> Istanbul's New Mayor Quickly Emerges as a Rival to Erdogan, Carlotta Gall, 03.07.2019, <https://www.nytimes.com/2019/07/03/world/asia/erdogan-ekrem-imamoglu-turkey.html> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>50</sup> It is time to draft a new constitution, Erdoğan says, FEB 01, 2021, <https://www.dailysabah.com/politics/it-is-time-to-draft-a-new-constitution-erdogan-says/news> (այցելվել է 31.03.2021թ.):

տեսանկյունից շատ կարևոր է ներքին և արտաքին քաղաքականության այդ մեծ կապի ուսումնասիրությունը:

Ինչպես նշվեց, «Արդարություն և զարգացում» կուսակցությունը իշխանության գալուց հետո սկզբնական փուլում որպես արտաքին քաղաքական գլխավոր առաջնահերթություն դիտարկում էր ԵՄ-ի հետ ավելի խոր ինտեգրումը: Սա պայմանավորված էր առաջին հերթին Թուրքիայի ներքաղաքական իրողություններով՝ իշխող կուսակցության և Գյուլենի սերտ համագործակցությամբ, ինչպես նաև 2003-2007թթ. արտգործնախարար, այնուհետև նախագահ Աբդուլլա Գյուլի դերակատարությամբ: Վերջինս չնայած իր իսլամական հայացքներին՝ միաժամանակ պաշտպանում էր արտաքին քաղաքականության եվրոպական ինտեգրման ուղղությունը:

Իրավիճակը աստիճանաբար փոխվեց, երբ Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա հետզհետե մեծացավ Ահմեդ Դավութօղլուի ազդեցությունը, ով սկզբում Էրդողանի խորհրդականի, այնուհետև արտգործնախարարի և վարչապետի կարգավիճակում առաջ էր մղում արտաքին քաղաքական սեփական հայեցակարգը: Դավութօղլուն առաջարկեց հարևանների հետ այսպես կոչված «զրո խնդիր» քաղաքականությունը, որը իրականում առաջ էր քաշում հարևանների հետ խնդիրները փափուկ մեթոդներով՝ տնտեսական, կրոնական-մշակութային, քարոզչական և այլն, կարգավորելու գաղափարը և ենթադրում էր արևմտյան կապերի փոխլրացում՝ այլ տարածաշրջաններում, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքում և իսլամական աշխարհում գործընկերների հետ ավելի խոր համագործակցության միջոցով: Դավութօղլուն Թուրքիան դիտարկում էր որպես սուրի մահմեդական աշխարհի կենտրոնական հանգույց, մասնավորապես՝ որտեղ ժամանակին տարածված էր «օսմանյան մշակույթն ու ազդեցությունը»՝ Մերձավոր Արևելք, Կովկաս, Բալկաններ և Կենտրոնական Ասիա: Դավութօղլուն գտնում էր, որ Թուրքիան կարող է դառնալ իսլամական աշխարհը միավորող և մյուս տարածաշրջանների հետ կամրջող առաջնորդ պետություն<sup>51</sup>:

Դավութօղլուի արտաքին քաղաքական հայեցակարգը մի շարք փորձագետների կողմից բնութագրվում է որպես պանթուրքական կամ նեոօսմանական<sup>52</sup>, մյուսները

<sup>51</sup> Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, AHMET DAVUTOĞLU, Insight Turkey Vol. 10 / No. 1 / 2008 pp. 77-96, <http://file.setav.org/Files/Pdf/ahmet-davutoglu-turkeys-foreign-policy-vision-an-assessment-of-2007.pdf> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>52</sup> Neo-Ottoman minister, Ahmet Davutoğlu has redrawn Turkey's foreign policy to put Istanbul at the centre of geopolitics, By Güldener Sonumut, July 8, 2009 <https://www.politico.eu/article/neo-ottoman-minister/> (այցելվել է 31.03.2021թ.):

այն ավելի շուտ պանիսլամական են համարում<sup>53</sup>: **Իրականում Դավութօղլուի արտաքին քաղաքական հայեցակարգը լավագույնս արտացոլում է Թուրքիայի ներքաղաքական կյանքում գերակշռող ծայրահեղ ազգայնականության և իսլամական գաղափարների սիմբիոզը:**

Դավութօղլուի կողմից Թուրքիայի արտգործնախարարի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում հենց արտաքին գերատեսչությունն էր հանդիսանում քաղաքականություն մշակող հիմնական ինստիտուտը, թեև Էրդողանն ու նրա խորհրդականները մեծ ազդեցություն էին պահպանում որոշումների կայացման գործընթացի նկատմամբ: Երբ 2014-2016 թվականներին Դավութօղլուն ստանձնեց վարչապետի պաշտոնը, արտաքին հարցերում մեծացավ նրա աշխատակազմի ազդեցությունը, սակայն իրավիճակը փոխվեց, երբ Էրդողանի հետ մրցակցության արդյունքում 2016թ. մայիսին վերջինս լքեց վարչապետի աթոռը<sup>54</sup>:

Այդ իրադարձություններից, ինչպես նաև **2016-ի անհաջող հեղաշրջման փորձից հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության էպիկենտրոնը տեղափոխվեց նախագահի աշխատակազմ:** Այժմ, ըստ տարբեր փորձագիտական գնահատականների, Թուրքիայի արտգործնախարարությունը և ներկայիս արտգործնախարար Չավուշօղլուն որոշիչ ազդեցություն չունեն կարևոր արտաքին քաղաքական որոշումների կայացման գործընթացի նկատմամբ: Փոխարենը բավականին մեծ դերակատարություն են ստանձնել Էրդողանի երկու ամենահավատարիմ խորհրդատուները՝ Իբրահիմ Քալինը և Բերաթ Ալբայրաքը<sup>55</sup>: Ալբայրաքը Էրդողանի փեսան է, խորհրդարանի նախկին պատգամավոր և էներգետիկայի ու ֆինանսների նախկին նախարար, ով հայտնի է նաև մի շարք կոռուպցիոն սկանդալներով: Քալինը Էրդողանի խոսնակն է և ըստ որոշ գնահատականների՝ Թուրքիայի անվտանգության ռազմավարության մշակման գործում եղել է գլխավոր դերակատարը, ինչպես նաև համարվում է Թուրքիայի հաջորդ արտգործնախարարի գլխավոր թեկնածուն:

<sup>53</sup> Early writings reveal the real Davutoglu, Behlul Ozkan, August 13, 2014, <https://www.al-monitor.com/pulse/originals/2014/08/zaman-davutoglu-ideologue-behlul-ozkan-academic-akp-islamic.html> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>54</sup> Turkish PM Davutoglu resigns as President Erdoğan tightens grip, The Guardian, 5 May, 2016, <https://www.theguardian.com/world/2016/may/05/ahmet-davutoglus-future-turkish-prime-minister-balance>, <https://www.bbc.com/news/world-europe-36213401> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>55</sup> Turkish foreign policy: structures and decision-making processes, Siri Neset, Mustafa Aydin, Hasret Dikici Bilgin, Metin Gürcan, Arne Strand, Chr. Michelsen Institute (2019) <https://www.cmi.no/publications/6854-turkish-foreign-policy-structures-and-decision-making-processes> (այցելվել է 31.03.2021թ.):

Առհասարակ, **Թուրքիայի արտաքին քաղաքականությունը էական տրանսֆորմացիայի ենթարկվեց հատկապես 2016-ի իրադարձություններից հետո: Հատկանշական է, որ հեղաշրջման փորձից հետո շուրջ մեկ տարվա ընթացքում Գյուլենական շարժման հետ համագործակցության պատրվակով աշխատանքից ազատվել է Թուրքիայի դիվանագիտական կորպուսի կարերային դիվանագետների ավելի քան 30%-ը<sup>56</sup>:**

«Գյուլենականներին» դիվանագիտական կորպուսից հեռացնելու գործընթացը սկսվել էր դեռևս 2013-ին, երբ նկատելիորեն սրվեցին Գյուլենի և Էրդողանի հակասությունները, միաժամանակ գերատեսչությունը համալրվում էր «Ազգայնական շարժում» կուսակցության համակիրներով և «եվրասիական» քաղաքականության կողմնակիցներով, իսկ 2016-ից հետո այս գործընթացը պարզապես արագացավ: **Ներգրավվող նոր կադրերի շարքում գերակշռում էին Արևմուտքի նկատմամբ բացասաբար տրամադրված և ՌԴ-ի ու Մերձավոր Արևելքի հիմնական հարևանների հետ ավելի ճկուն քաղաքականության կողմնակիցները:** Սա միանշանակ իր ազդեցությունն ունեցավ Թուրքիայի արտաքին և տարածաշրջանային քաղաքականության վրա:

Թուրքիայում իշխանությունը իր ձեռքում կոնսոլիդացնելուն, ավելի ազգայնական և իսլամական քաղաքական կուրս որդեգրելուն զուգահեռ՝ Էրդողանը աստիճանաբար անցում կատարեց դեպի ավելի ագրեսիվ արտաքին քաղաքականություն: **Եթե Դավութօղլուն առաջ էր քաշում «զրո խնդիր» հարևանների հետ քաղաքականությունը, ապա հետզհետե Թուրքիայի արտաքին քաղաքական օրակարգում գերակշռող դարձավ «արժեքավոր մենության» գաղափարը, որը Էրդողանի խոսնակ Քալինը մեկնաբանում էր Թուրքիայի արժեքներն ու ազգային շահերը պաշտպանելու անհրաժեշտությամբ<sup>57</sup>:** Էրդողանն այժմ իրականացնում է ավելի հարձակողական, թեև հավասարակշռված արտաքին քաղաքականություն, որի առաջնահերթ նպատակն է արտաքին և տարածաշրջանային հարցերում կայացնել ռազմաքաղաքական այնպիսի որոշումներ, որոնք լավագույնս կնպաստեն սեփական

<sup>56</sup> Turkey's foreign ministry labels 394 Turkish diplomats as terrorists, Stockholm Center for freedom, By Abdullah Bozkurt, May 22, 2017, <https://stockholmcf.org/turkeys-foreign-ministry-labels-394-turkish-diplomats-as-terrorists/> (այցելվել է 31.03.2021թ.), Turkish gov't dismisses 461 career diplomats from foreign ministry over alleged links to Gülen movement, Stockholm Center for freedom, April 14, 2018, <https://stockholmcf.org/turkish-govt-dismisses-461-career-diplomats-from-foreign-ministry-over-alleged-links-to-gulen-movement/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>57</sup> Turkey not 'lonely' but dares to do so for its values and principles, says PM adviser, August 26 2013, <https://www.hurriyetdailynews.com/turkey-not-lonely-but-dares-to-do-so-for-its-values-and-principles-says-pm-adviser--53244> (այցելվել է 31.03.2021թ.):



իշխանության ամրապնդմանը և իշխող կուսակցության ու վերջինիս դաշնակիցների ազգայնական շահերի առաջխաղացմանը:

Այսպես, արևմուտքի հետ հարաբերությունների վատթարացմանը, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում Դավութօղլուի առաջ քաշած պանիսլամական քաղաքականության անհաջողությանը զուգահեռ՝ վերջին տարիներին Թուրքիան սկսել է ավելի մեծ առաջնահերթություն տալ իր անմիջական հարևանների հետ հարաբերություններին՝ հայացքն ուղղելով դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա<sup>58</sup>: Արտաքին քաղաքական առաջնահերթությունների այս փոխակերպումը, ինչպես նշվեց, զուգորդվում է Թուրքիայի ներքաղաքական կյանքում պանթուրքական և ծայրահեղ ազգայնական ուժերի ու գաղափարների ամրապնդմամբ<sup>59</sup>:

**Միևնույն ժամանակ ՁՈՒ-ի նկատմամբ Էրդողանի նախաձեռնած հարձակումների, կադրային փոխատեղումների, գեներալական կազմի վարկաբեկման արդյունքում բանակի խաթարված հեղինակությունը վերականգնելու նպատակով Թուրքիայի իշխանությունները որդեգրել են երկրի սահմաններից դուրս ՁՈՒ-ի ավելի հաճախ կիրառման մարտավարություն<sup>60</sup>: Հյուսիսային Սիրիայում և Իրաքում Թուրքիայի ՁՈՒ-ի ակտիվ ներգրավվածությունը նպատակ է հետապնդում նաև բարձրացնելու ՁՈՒ-ի խաթարված հեղինակությունը, ինչպես նաև ցույց տալու Էրդողան-բանակ ուղղահայացի արդունավետությունը<sup>61</sup>: Փորձենք ներկայացնել ստեղծված իրավիճակում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության և կարևոր դերակատարների հետ հարաբերությունների հիմնական առանձնահատկությունները:**

Թուրքիայի արտաքին քաղաքականության արևելյան ուղղության կարևոր առանձնահատկություններից մեկը Իրանի և ՌԴ-ի հետ բավականին բարդ և

<sup>58</sup> Turkey's Impending Eastern Turn, A.KADIR YILDIRIM, August 18, 2016,

<https://carnegieendowment.org/sada/64358> (այցելվել է 31.03.2021թ.):, Turkey at a crossroads: In this new decade, will Ankara turn East or West? BY SIMON WOLFE, JAN 24, 2020, <https://www.dailysabah.com/op-ed/2020/01/24/turkey-at-a-crossroads-in-this-new-decade-will-ankara-turn-east-or-west> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>59</sup> After Erdogan's win, what's next for Turkey's foreign policy?, Semih Idiz, July 3, 2018,

<https://www.al-monitor.com/pulse/originals/2018/07/turkey-what-will-happen-to-ties-with-west-in-new-system.html> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>60</sup> Erdogan's great game: Soldiers, spies and Turkey's quest for power, Financial Times,

Laura Pitel, JANUARY 12 2021, <https://www.ft.com/content/8052b8aa-62b9-40c9-a40c-d7187d5cd98a> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>61</sup> Turkey's Syria operation reveals cracks among Erdogan's political foes, By Ali Kucukgocmen, Tuvan Gumrukcu, Orhan Coskun, November 13, 2019 <https://www.reuters.com/article/us-turkey-politics-syria-idUSKBN1XNOE4> (այցելվել է 31.03.2021թ.):

բազմաշերտ հարաբերություններն են: Իրանն ու Թուրքիան կարող են ինչպես համագործակցել, այնպես էլ մրցակցել տարբեր տարածաշրջանային հարցերում, մասնավորապես՝ Սիրիայում, Իրաքում, Կովկասում: Այս երկրներին միավորում են տարածաշրջանային մի քանի իրողություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ ամենակարևոր հանգամանքները՝

- քրդական հարցի հետ կապված մտահոգությունները և դիմադրությունը Սիրիայում ու Իրաքում քրդական պետության ստեղծման գաղափարին,

- տարածաշրջանում ոչ տարածաշրջանային դերակատարների (ԱՄՆ, ԵՄ, ՌԴ) ազդեցության զսպումը,

- Կատարին աջակցելու հարցում Թուրքիայի քաղաքականությունը և հակասությունները Սաուդյան Արաբիայի ու մյուս արաբական երկրների հետ, ինչը համընկնում է Իրանի շահերին,

- Իրանի նկատմամբ ամերիկյան պատժամիջոցների հարցում վերջին տարիներին Էրդողանի քննադատական մոտեցումը և երկկողմ տնտեսական համագործակցությունը,

- երկու երկրների զգուշավոր հարաբերությունները ՌԴ-ի հետ,

- Էրդողանի հակահրեական հռետորաբանության կոշտացումը և Իսրայելի հետ վերջին տարիների հակասությունները,

- որոշ հարցերում մահմեդական համերաշխությունը:

Այս հարցերի շուրջ համագործակցությունը Թուրքիային թույլ է տալիս խուսափել Իրանի հետ բացահայտ առճակատումից, ինչը միաժամանակ Էրդողանին հնարավորություն է տալիս ավելի ճկուն գործել արևելյան ուղղությամբ իր արտաքին քաղաքական ծրագրերը կյանքի կոչելու հարցում: Սակայն այս հնարավորությունները անսահմանափակ չեն, առկա են որոշակի «կարմիր գծեր», որոնք ինչպես Իրանը, այնպես էլ Թուրքիան դեռևս փորձում են չհատել: Ակնհայտորեն ավելի շատ են այն հարցերը, որտեղ Թուրքիան ու Իրանը ունեն միմյանցից տարբերվող, երբեմն խիստ հակասող շահեր՝

- Թուրքիայի և Իրանի փոխադարձ մտահոգությունները՝ կապված կողմերից յուրաքանչյուրի տարածաշրջանային ակտիվության և ազդեցության տարածման հետ,

- կրոնական տարբերությունները շիաների ու սուննիների միջև,

- Թուրքիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին,

- տարածաշրջանում Թուրքիայի աջակցությունը սուննի իսլամիստներին և ջիհադիստական խմբավորումներին,

- Իրանի միջուկային ծրագիրը,

- Սիրիայում և Իրաքում ազդեցության համար պայքարը,

- Սիրիայում, Իրաքում Իրանի որոշակի համագործակցությունը Քրդական աշխատավորական կուսակցության ճյուղերի հետ,
- քրդական սեպարատիզմի հարցում հակասող քաղաքականությունը, մրցակցությունը Իրաքյան Քուրդիստանում ազդեցության համար,
- Հարավային Կովկասում Թուրքիայի ազդեցության աճի հետ կապված Իրանի մտահոգությունները՝ հատկապես Արցախյան վերջին պատերազմից հետո,
- Իրանի մտահոգությունները Անկարայի պանթուրքական և պանիսլամական ծրագրերի վերաբերյալ, մրցակցությունը իսլամական աշխարհում առաջնորդության համար:

Թուրքիայի և Իրանի հակասությունները առավել ցայտուն դրսևորվում էն Սիրիայում և Իրաքում: Թուրքիան օգտվեց Իրաքում ամերիկյան ներկայության աստիճանաբար կրճատումից և հետզհետե մեծացրեց իր ռազմական ներկայությունը Իրաքի հյուսիսային շրջաններում: Սա մի կողմից պայմանավորված էր Էրդոհանի ծավալապաշտական ծրագրերով, ներքին խնդիրները արտաքին ձեռքբերումներով քողարկելու ձգտմամբ, մյուս կողմից՝ միտված էր Իրաքում Իրանի ազդեցությունը զսպելուն և քրդական սեպարատիզմի՝ Թուրքիայի համար անցանկալի սցենարը կանխելուն:

Դեռևս 2007թ. Անկարան և Բաղդադը հուշագիր էին ստորագրել, որով Թուրքիան իրավունք էր ստացել Իրաքի հյուսիսում հետապնդել Քրդական աշխատավորական կուսակցության զինյալներին<sup>62</sup>: Թուրքիան սա օգտագործում էր Իրաքի հյուսիսում ռազմական ներկայություն ապահովելու, տեղի սուննի բնակչության շրջանում պրոքսի ուժերի ձևավորման և վերջիններիս զինելու նպատակով: 2015-ին Թուրքիայում քրդերի հետ հարաբերությունների վատթարացումից և հակամարտության սրացումից հետո Էրդոհանը առանց Իրաքի թույլտվության հյուսիսային Նինվեի շրջանում ռազմաբազա ստեղծեց՝ տեղակայելով հազարից ավելի զինվորականներ և ծանր զրահատեխնիկա<sup>63</sup>:

Չնայած Իրաքի հյուսիսում Թուրքիայի ռազմական գործողությունների պաշտոնական պատճառաբանությանը, իրականում այն բխում է տարածաշրջանում Անկարայի ծավալապաշտական նպատակներից: Թուրք ազգայնականները վաղուց վիճարկում են Իրաքի հյուսիսային շրջանների՝ մասնավորապես Մոսուլի նկատմամբ

<sup>62</sup> Turkey-Iraq agree security pact, BBC, 28 September 2007, <http://news.bbc.co.uk/2/hi/7017919.stm> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>63</sup> Turkey's Military Presence in Iraq: A Complex Strategic Deterrent, by Can Kasapoglu, Soner Cagaptay, Dec 22, 2015 <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/turkeys-military-presence-iraq-complex-strategic-deterrent> (այցելվել է 31.03.2021թ.):

Իրաքի պատմական իրավունքները: Պատահական չէ, որ թելադրված Թուրքիայի ներքաղաքական կյանքում Էրդողանի ազգայնական քաղաքական կուրսով՝ վերջինս նույնպես սկսեց բարձրաձայնել հարևան երկրների տարածքների նկատմամբ իր ակնհայտ հավակնությունների մասին: Այսպես, դեռ 2016-ին Էրդողանը դժգոհում էր, որ «Աթաթուրքի և բրիտանացիների միջև 1923-ին կնքված Լոզանի պայմանագիրը Թուրքիային շատ փոքր տարածք է թողել»<sup>64</sup>: Հետագայում Էրդողանը սկսեց պարբերաբար վիճարկել Լոզանի պայմանագրի արդարացիությունը, այդ թվում հավակնություններ ներկայացնելով կապված հարևան մյուս երկրների սահմանների հետ<sup>65</sup>:

Ինչ վերաբերում է Իրաքյան Քուրդիստանում Իրանի և Թուրքիայի մրցակցությանը, ապա եթե սկզբնական շրջանում Էրդողանը փորձում էր հավասարակշռել հարաբերությունները Էրբիլի և Բաղդադի հետ, ապա ներկայումս ավելի մեծ տեղ է հատկացնում քրդերի հետ հարաբերություններին՝ հաշվի առնելով Բաղդադի նկատմամբ Իրանի ազդեցության անհամաչափությունը: Այս քաղաքականությունը Էրդողանին հնարավորություն է տալիս մի կողմից պահպանել ռազմական ներկայությունը Իրաքի հյուսիսում, մյուս կողմից՝ տարբեր տնտեսական գործիքներով զսպել Իրաքյան Քուրդիստանի անկախության հավակնությունները: Բացի այդ, Անկարան ձգտում է սահմանափակել Իրաքյան Քուրդիստանում Իրանի ազդեցության աճը և Իրաքի և Սիրիայի հյուսիսային տարածքներով քրդերի հետ համագործակցության միջոցով՝ վերջինիս ելքը դեպի Միջերկրական ծով: Վերջապես, Իրաքյան Քուրդիստանի հետ համագործակցությունը Թուրքիայի համար կարևոր է նաև այդ տարածաշրջանից էներգակիրների ներկրման տեսանկյունից:

Նույնը կարելի է ասել Սիրիայում Իրանի և Թուրքիայի մրցակցության մասին: Այստեղ էլ, Անկարան Քրդական աշխատավորական կուսակցության և նրա հետ փոխկապակցված քրդական միավորների դեմ պայքարի պատրվակը օգտագործում է Սիրիայի հյուսիսում սեփական ռազմական ներկայությունը ամրապնդելու և այնտեղ Իրանի ու ՌԴ-ի ազդեցությունը զսպելու նպատակով: Ակնհայտ է, որ ինչպես Իրաքի

<sup>64</sup> Turkey's New Maps Are Reclaiming the Ottoman Empire, Foreign Policy, By Nick Danforth | October 23, 2016, <https://foreignpolicy.com/2016/10/23/turkeys-religious-nationalists-want-ottoman-borders-iraq-erdogan/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>65</sup> Turkey's Erdogan calls for border treaty review in Greece visit, BBC, 7 December 2017, <https://www.bbc.com/news/world-europe-42265260> (այցելվել է 31.03.2021թ.), Erdogan Wants to Challenge the Lausanne Treaty? Let's Take a Look, By Philippe Raffi Kalfayan, February 15, 2018, <https://mirrorspectator.com/2018/02/15/erdogan-wants-challenge-lausanne-treaty-lets-take-look/> (այցելվել է 31.03.2021թ.), Erdoğan setting the stage for invalidating the Lausanne Treaty after Hagia Sophia move, Yavuz Baydar, Jul 25, 2020, <https://ahvalnews.com/2023-centenary/erdogan-setting-stage-invalidating-lausanne-treaty-after-hagia-sophia-move> (այցելվել է 31.03.2021թ.):

պարագայում, այնպես էլ Սիրիայում տեղակայելով ռազմաբազաներ և ամրապնդելով իր ներկայությունը, Էրդողանը հետագայում կասկածի տակ է դնելու այդ երկրների սահմանների անձեռնմխելիությունը:

Հարավային Կովկասում Իրանի և Թուրքիայի մրցակցությունը մինչև վերջերս մարտավարական բնույթ էր կրում՝ ակնհայտ ռազմական տարրի բացակայությամբ: Իրավիճակը փոխվել է Արցախյան վերջին պատերազմից հետո, ինչը կարող է տարածաշրջանում երկու մրցակից երկրների միջև սուր հակամարտության նոր օջախ ձևավորել՝ չնայած երկուստեք փորձերին՝ տարածաշրջանում նոր իրողությունները օգտագործելու ի նպաստ փոխադարձ համագործակցության խորացման: Ընդհանուր առմամբ, Թուրքիայի ագրեսիվ և ազգայնական տարածաշրջանային քաղաքականությունը Իրանի համար լուրջ գլխացավանք է, ու չնայած որոշ համընկնող շահերի շուրջ համագործակցությունը առայժմ թույլ է տալիս խուսափել ակնհայտ բախումից, սակայն նման իրավիճակը դժվար թէ երկարաժամկետ լինի:

Էրդողանի արտաքին քաղաքականության արևելյան ուղղության վերջին տարիների ամենաուշագրավ առանձնահատկությունը ՌԴ-ի հետ հարաբերություններն են: **Երկկողմ հարաբերություններում փոխադարձ մրցակցության և համագործակցության փոփոխական շրջափուլերը, ակնհայտ թշնամանքի և բարեկամության եզրագծով քայլելու կողմերի ունակությունը քաղաքականապես շահեկան է ինչպես ՌԴ իշխանությունների, այնպես էլ Էրդողանի համար:** Վերջինս ՌԴ-ի և նախագահ Պուտինի հետ առանձնահատուկ անձնական հարաբերություններն արդյունավետորեն օգտագործում է ինչպես ներքաղաքական, այնպես էլ տարածաշրջանային քաղաքականության հարցերում արտաքին ուժերի՝ մասնավորապես Արևմուտքի ճնշումը նվազագույնի հասցնելու նպատակով: **ՌԴ-ի հետ իրավիճակային համագործակցությունը Էրդողանին հնարավարություն է տալիս թուլացնել Թուրքիայում ազդեցիկ արևմտամետ ընդդիմության դիրքերը և իր շուրջը համախմբել հակաարևմտյան քաղաքական ուժերին՝ միաժամանակ զիջումներ կորզելով արևմտյան դաշնակիցներից:**

Ռուս-թուրքական համագործակցության այս առանձնահատուկ բնույթը մեծապես պայմանավորված է նաև Էրդողանի և Պուտինի միջև ձևավորված անձնական հարաբերություններով: Ուշագրավ է, որ դեռևս 2010-ին Թուրքիայի և ՌԴ-ի միջև ձևավորվեց բարձր մակարդակի համագործակցության խորհուրդ, որի շրջանակներում տարբեր մակարդակներում, այդ թվում՝ նախագահների միջև, պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ և քննարկվում ռազմավարական



համագործակցության կարևորագույն հարցերը<sup>66</sup>: Այդպիսի միջանձնային կապերը և պարբերաբար կրկնվող հանդիպումները հնարավորություն են տալիս տարբեր հարցերում ավելի ճկուն քաղաքականություն վարել և նույնիսկ ամենասուր հակասությունների ժամանակ փոխզիջումային լուծումներ գտնել:

Պատմականորեն ռուս-թուրքական հարաբերությունները զարգացել են սևծովյան տարածաշրջանում գերիշխանության և ազդեցության համար մրցակցության պայմաններում: Ռուսաստանը միշտ ձգտել է սահմանափակել Թուրքիայի ազդեցությունը ինչպես սև ծովում և հարակից երկրներում, այնպես էլ Կովկասում ու Կենտրոնական Ասիայում: Թուրքիան իր հերթին նպատակ ունի մեծացնել այս տարածաշրջաններում իր ազդեցությունը՝ ի հաշիվ ռուսական գերակայության, միաժամանակ կանխել Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը ինչպես սևծովյան տարածաշրջանում, այնպես էլ Մերձավոր Արևելքում: ԽՍՀՄ փլուզումից հետո երկու երկրները սահմանափակ ռեսուրսների ու հնարավորությունների պատճառով չէին կարողանում էական հաջողություններ գրանցել վերոհիշյալ ռազմավարական նպատակներին հասնելու ճանապարհին, սակայն իրավիճակը փոխվեց 2010-ական թվականներից:

Այսպես, Ռուս-վրացական պատերազմից, և հատկապես Ղրիմը ՌԴ-ին միացնելու գործընթացից ու Սիրիայում ռազմական միջամտությունից հետո Թուրքիայում ամրապնդվեց այն գիտակցումը, որ Ռուսաստանը, ինչպես նախորդ մի քանի հարյուրամյակների ընթացքում, այժմ կրկին դառնում է տարածաշրջանում Անկարայի հիմնական և անմիջական ռազմական սպառնալիքը<sup>67</sup>: Այդ մտավախությունները ավելի ամրապնդվեցին տարածաշրջանում ռուսական ռազմական ներուժի, այդ թվում՝ սևծովյան նավատորմի հզորացման արդյունքում: Միաժամանակ, ռուսական ռազմական և տնտեսական ճնշման նկատմամբ Թուրքիայի խոցելիությունը սահմանափակում է տարածաշրջանում ավելի համարձակ գործելու Էրդոհանի հնարավորությունները, թեև վերջինս այդ խոցելիությունը մեղմացնելու համառ քայլեր է ձեռնարկում: Խոսքը առաջին հերթին ՌԴ-ից տնտեսական՝ նախևառաջ էներգետիկ կախվածությունը թուլացնելու, պրոքսի ուժերի և ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով ռազմական որոշակի իրավիճակային առավելություն ստանալու ջանքերի մասին է: Ռուսական սպառնալիքը Թուրքիային

<sup>66</sup> Russia and Turkey have established the High-Level Cooperation Council, Kremlin, May 12, 2010, <http://en.kremlin.ru/events/president/news/7723> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>67</sup> Russia and Turkey in the Black Sea and the South Caucasus, International Crisis Group, 28 June, 2018, <https://www.crisisgroup.org/europe-central-asia/western-europemediterranean/turkey/250-russia-and-turkey-black-sea-and-south-caucasus> (այցելվել է 31.03.2021թ.):

նաև ստիպում է ապավինել ՆԱՏՕ-ի և ՌԴ-ի միջև զգուշորեն խուսանավելու ռազմավարությանը:

Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի և Թուրքիայի միջև միաժամանակ մրցակցության և համագործակցության վերջին տարիների քաղաքականությունը պայմանավորված է տարածաշրջանային մի շարք հարցերի վերաբերյալ երկու կողմերի շահերի համընկնմամբ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- երկու երկրների միջև տնտեսական կապերի ընդլայնումը,
- լիբերալ արտաքին ուժերի նկատմամբ էրդողանի ու Պուտինի բացասական վերաբերմունքը և ավտորիտար կառավարման համակարգի նախապատվությունը,
- համագործակցությունը էներգետիկ ոլորտում՝ գազ, ատոմակայան, ինչպես նաև դեպի Եվրոպա գազի մատակարարման հարցում Թուրքիայի տարանցիկ կարևորությունը ՌԴ-ի համար,
- Արևմուտքի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում շարունակական լարվածությունը,
- զենքի առևտուրը (U-400),
- Մերձավոր Արևելքում տարածաշրջանային հարցերի շուրջ իրավիճակային համագործակցությունը՝ միտված երրորդ երկրների ազդեցության սահմանափակմանը:

Վերոհիշյալ իրողությունները և ծայրահեղ հակադրությունից խուսափելու կարևորության փոխադարձ գիտակցումը Անկարային և Մոսկվային թույլ են տալիս պարբերաբար թոթափել լարվածությունը և լուծումներ փնտրել: Սակայն, եթե կարճաժամկետ հեռանկարում և ուժերի հավասարակշռության ներկայիս պայմաններում այսպիսի քաղաքականությունը հնարավոր է, միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում դրա ճակատագիրը մշուշոտ է, քանի որ Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերություններում անհամեմատ ավելի շատ են միմյանց հակասող շահերն ու նպատակները: Առանձնացնենք երկու երկրների շահերի բախման հիմնական ուղղությունները՝


- Անկարայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին և Թուրքիայում արևմտյան ռազմական ներկայությունը,
- Ռուսաստանի ներկայությունը Սիրիայում և այնտեղ կողմերի աջակցությունը հակադիր ուժերին,
- ՌԴ-ի համագործակցությունը Սիրիայում և Իրաքում քրդական ուժերի հետ,
- ՌԴ-ի ռազմական ներուժի ավելացումը Սև և Միջերկրական ծովերում, ինչը Թուրքիան դիտարկում է որպես անմիջական սպառնալիք,

- Էներգետիկ տարանցիկ միջանցքների հարցում շահերի բախումը, Թուրքիայի ակտիվ մասնակցությունը ՌԴ Էներգետիկ շահերին հակասող նախագծերին (Հարավային գազային միջանցք, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ և այլն),
- ՌԴ մտահոգությունները՝ կապված տարբեր ահաբեկչական խմբավորումների հետ Անկարայի համագործակցության հետ,
- ՌԴ անհանգստությունը Կովկասում, Միջին Ասիայում Թուրքիայի ազդեցության մեծացման և տնտեսական, մշակութային էքսպանսիայի հարցում,
- հետխորհրդային տարածաշրջանում և ՌԴ-ում Թուրքիայի կողմից պանթուրքական, պանիսլամական գաղափարների տարածման ռիսկերը,
- Թուրքիայի ապակայունացնող քաղաքականությունը հետխորհրդային մի շարք հակամարտությունների հարցում՝ ԼՂ, Ղրիմ և այլն,
- Մոսկվայի կասկածամտությունը ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների առնչությամբ:

Միաժամանակ, պետք է նշել, որ **Ռուսաստանում գերակշռում է այն ընկալումը, որ Կովկասում և Կենտրոնական Ասիայում ազդեցիկ և գերակայող ուժ դառնալու Թուրքիայի հնարավորությունները խիստ սահմանափակ են՝ հաշվի առնելով ռեսուրսների անբավարարությունը, ներքին խնդիրները, առավել ևս Ռուսաստանի համեմատ ռազմական ներուժի էական անհամաչափությունը:** Մոսկվան Թուրքիային դիտարկում է որպես կարևոր հարևան ու Էներգակիրների խոշոր շուկա և դեպի Եվրոպա մատակարարման այլընտրանքային ուղղություն, որի հետ իրավիճակային համագործակցության միջոցով հնարավոր է սահմանափակել Մերձավոր Արևելքում և հետխորհրդային տարածաշրջանում ԱՄՆ-ի ու ԵՄ-ի ազդեցությունը և ամրապնդել սեփական դիրքերը: ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ համագործակցությունը, հատկապես՝ սպառազինությունների ոլորտում, Ռուսաստանը դիտարկում է նաև դաշինքի ներսում տարածայնություններն ի ցույց դնելու և դաշինքի անդամ այլ երկրների հետ համագործակցության նմանատիպ ձևաչափի նախադեպ ստեղծելու տեսանկյունից:

Վերոհիշյալ իրողությունների համադրումը թույլ են տալիս, որպեսզի ՌԴ-ը և Թուրքիան շարունակեն «մրցակցային համագործակցությունը», սակայն երկկողմ հակասություններն այնքան խոր և բազմաշերտ են, որ այդ համագործակցությունը ցանկացած պահի կարող է վերածվել բացահայտ թշնամանքի և հակամարտության, ինչպես դա տեղի ունեցավ 2015-2016 թվականներին: **Այս իրավիճակը ձեռնտու է նաև Էրդողանին, ով կարողանում է ՌԴ-ի հետ հարաբերությունները ոչ միայն**

ծառայեցնել իր տարածաշրջանային ծրագրերի իրականացմանը<sup>68</sup>, այլև ներքաղաքական ծրագրերին՝ ազատորեն խուսանավելյով հասարակության մե՛րթ հակառուսական, մե՛րթ հակաարևմտյան տրամադրությունների դաշտում:



Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականության վրա Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերությունների վերոհիշյալ առանձնահատկությունների ազդեցությունը առանցքային նշանակություն ունի, այն Էրդոդանին հնարավորություն է տալիս երկու ուղղությամբ էլ ավելի ճկուն լինել: Միաժամանակ, Թուրքիան

<sup>68</sup> 30 years post-Cold War, Turkey tries to strike balance with US, Russia, By Şeyma Nazli Gürbüz, JAN 03, 2021, <https://www.dailysabah.com/politics/news-analysis/30-years-post-cold-war-turkey-tries-to-strike-balance-with-us-russia> (այցելվել է 31.03.2021թ.):

շարունակում է մնալ ՆԱՏՕ-ի հզոր դաշնակիցը, որը մեծ ազդեցություն կամ առնվազն այդպիսի ազդեցության համար անհրաժեշտ լծակներ ունի միանգամից երեք կարևոր տարածաշրջաններում՝ Մերձավոր Արևելք, Կովկաս և Կենտրոնական Ասիա: Բոլոր այս տարածաշրջաններում Թուրքիան ձգտում է ավելի մեծ դերակատարություն ստանձնել, և եթե Մերձավոր Արևելքում դա ոչ միշտ է համընկնում Արևմուտքի շահերին, ապա Կովկասի և Կենտրոնական Ասիայի պարագայում մեծ մասամբ համընկնում է դրանց հետ: Նաև սա է պատճառը, որ Արևմուտքը հաճախ աչք է փակում Էրդողանի ներքաղաքական և արտաքին քաղաքական ավտորիտար և ազգայնական նախաձեռնությունների վրա:

**Միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում Էրդողանը, որը հետզհետե խորացնում է համագործակցությունը «Ազգայնական շարժում» կուսակցության իր գարծընկերների հետ, այդ թվում՝ հաշվի առնելով վերջիններիս ազգայնական ծրագրերը, հավանաբար կորդեգրի ավելի ագրեսիվ արտաքին և պաշտպանական քաղաքականություն՝ միաժամանակ ձգտելով ավելի ամրապնդել իր ավտորիտար իշխանությունը Թուրքիայի ներսում:** Այս քաղաքականությունը տարբեր դրվագներում կհակասի ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի մյուս անդամների շահերին, կասկածի տակ կդնի Հյուսիսատլանտյան դաշինքի երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը, միաժամանակ խնդիրներ կառաջացնի ՌԴ-ի և տարածաշրջանի մյուս երկրների հետ: Սակայն, եթե այն բխելու է Էրդողանի ներքաղաքական շահերից ու նպատակներից, ապա վերջինս փորձելու է շարունակել տարածաշրջանային դերակատարների հետ հարաբերությունների հավասարակշռման նուրբ քաղաքականությունը:

Մեզ համար առավել մեծ կարևորություն է ներկայացնում Թուրքիայի ներքաղաքական գործընթացների ազդեցությունը Հարավային Կովկասում և հետխարհորդային տարածաշրջանում վերջինիս քաղաքականության վրա: ԽՍՀՄ փլուզումից ի վեր Անկարան փորձում էր Հարավային Կովկասում իր ազդեցությունն ու շահերը առաջ մղել հիմնականում փափուկ ուժի և տնտեսական ու մշակութային էքսպանսիայի միջոցով: Միաժամանակ դրա համար նպաստավոր նախադրյալներ էին ստեղծում Ադրբեջանի և Վրաստանի տարածքով արևելք-արևմուտք տնտեսական, տրանսպորտային ու էներգետիկ միջանցքները: Տարածաշրջանի երկրները իրենց հերթին Թուրքիայի հետ համագործակցությունը դիտարկում են սեփական ինքնիշխանությունն ու անկախությունը ամրապնդելու և ՌԴ-ի տարածաշրջանային ազդեցությանը հակակշռելու տեսանկյունից, ինչը համընկնում էր նաև ԱՄՆ-ի և ԵՄ-ի տարածաշրջանային շահերին: Միևնույն ժամանակ Թուրքիան խուսափում էր տարածաշրջանի անվտանգային հարցերում ակնհայտ միջամտություններից, ինչը կարող էր Ռուսաստանի վրդովմունքն առաջացնել:



Այս քաղաքականությունը բավական արդյունավետ էր, սկզբում իր ազդեցությունը ունեցավ թուրք-ադրբեջանական հարաբերությունների վրա, իսկ այնուհետև, հատկապես Վրաստանում՝ Վարդերի հեղափոխությունից հետո, նպաստեց եռակողմ ռազմավարական առանցքի ձևավորմանը: Այսպես, եթե 2000թ. Թուրքիայի առևտրի շրջանառությունը Վրաստանի և Ադրբեջանի հետ կազմում էր համապատասխանաբար 286 մլն<sup>69</sup> և 330 մլն<sup>70</sup> ԱՄՆ դոլար, ապա 2018-ին այդ ցուցանիշը կազմում էր համապատասխանաբար 1,5 մլրդ<sup>71</sup> և 1,8 մլրդ<sup>72</sup> ԱՄՆ դոլար: Տնտեսական ոլորտում համագործակցության հաջողությունները մեծապես նպաստեցին նաև ռազմաքաղաքական համագործակցության զարգացմանը:

Հարավային Կովկասում ռազմական ոլորտում Թուրքիայի հիմնական գործընկերն Ադրբեջանն է, որի հետ ռազմա-տեխնիկական համագործակցությունը հատկապես ակտիվացել է վերջին տարիներին: Մասնավորապես այն բանից հետո, երբ 2010թ. ստորագրվեց հայ-ռուսական ռազմական համագործակցության մասին արձանագրությունը, որով Հայաստանում ռուսական ռազմաբազայի տեղակայման ժամկետը երկարաձգվեց մինչև 2044 թվականը, Ադրբեջանն ու Թուրքիան կարճ ժամանակ անց ստորագրեցին ռազմավարական համագործակցության և փոխադարձ աջակցության մասին համաձայնագիր, որով պարտավորվում էին «ռազմական ագրեսիայի դեպքում բոլոր հնարավոր միջոցներով աջակցել միմյանց»<sup>73</sup>: Միաժամանակ, վերջին տարիների ակտիվացել են ինչպես երկկողմ՝ Ադրբեջան-Թուրքիա, այնպես էլ եռակողմ՝ Վրաստանի մասնակցությամբ զորավարժություններն ու ռազմաքաղաքական ձևաչափով համագործակցությունը: Ուշագրավ է, որ վերջին տարիներին Թուրքիան ռազմական ոլորտում համագործակցության փորձեր է նախաձեռնում նաև Կենտրոնական Ասիայի տարբեր երկրների հետ:

<sup>69</sup> Turkey Product exports and imports to Georgia 2000, The World Integrated Trade Solution (WITS), <https://wits.worldbank.org/CountryProfile/en/Country/TUR/Year/2000/TradeFlow/EXPIMP/Partner/GEO/Product/all-groups> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>70</sup> Turkey Product exports and imports to Azerbaijan 2000, The World Integrated Trade Solution (WITS), <https://wits.worldbank.org/CountryProfile/en/Country/TUR/Year/2000/TradeFlow/EXPIMP/Partner/AZE/Product/all-groups> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>71</sup> Turkey Product exports and imports to Georgia 2018, The World Integrated Trade Solution (WITS), <https://wits.worldbank.org/CountryProfile/en/Country/TUR/Year/2018/TradeFlow/EXPIMP/Partner/GEO/Product/all-groups> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>72</sup> Turkey Product exports and imports to Azerbaijan 2018, The World Integrated Trade Solution (WITS), <https://wits.worldbank.org/CountryProfile/en/Country/TUR/Year/2018/TradeFlow/EXPIMP/Partner/AZE/Product/all-groups> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>73</sup> Azerbaijan-Turkey Military Pact Signals Impatience with Minsk Talks, Shahin Abbasov, Jan 18, 2011, <https://eurasianet.org/azerbaijan-turkey-military-pact-signals-impatience-with-minsk-talks-analysts> (այցելվել է 31.03.2021թ.):

Արդեն նշվեց, որ Թուրքիայում արտաքին քաղաքական արևելյան ուղղության ակտիվացումը մեծ մասամբ պայմանավորված էր ներքաղաքական իրողություններով և իշխող կուսակցության գաղափարական հենասյունների փոփոխությամբ: Այսպես, եթե Դավութօղլուի հայեցակարգի շրջանակներում Թուրքիայում առաջնահերթությունը տրվում էր արտաքին և ներքին քաղաքականության կրոնական՝ իսլամական բաղադրիչին, որտեղ ավելի մեծ ուշադրության էր արժանանում հատկապես Մերձավոր Արևելքը, ապա այս տարածաշրջանում ունեցած անհաջողությունները Անկարային ստիպեցին փոխել առաջնահերթությունները:

Դեռևս 2009-ին ստորագրվեց Նախիջևանի պայմանագիրը<sup>74</sup>, որով ստեղծվեց այսպես կոչված Թուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդը, որին այժմ անդամակցում են Թուրքիան, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Ուզբեկստանը<sup>75</sup>: Այս հարթակը պարբերաբար Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից օգտագործվում է ինչպես թուրքալեզու երկրների միջև տնտեսական և մշակութային համագործակցության խորացման, այնպես էլ հակահայկական քարոզչության ու ոչ հայանպաստ բանաձևեր ընդունելու նպատակով: Ուշագրավ է, որ վերջին տարիներին փորձ է արվում նաև ավելի մեծ ուշադրություն դարձնել այս երկրների միջև համագործակցության ռազմական բաղադրիչին: Պատահական չէ, որ հատկապես Արցախյան վերջին պատերազմի ժամանակ և դրանից հետո Թուրքիայում կրկին ակտիվացավ այսպես կոչված «Թուրանական բանակի» գաղափարը<sup>76</sup>:

Այսպիսով, արևմուտքի հետ կապերի վատթարացումը, Մերձավոր Արևելքում արտաքին քաղաքական անհաջողությունները առաջիկայում էրդողանին ստիպելու են ավելի մեծ ուշադրություն դարձնել արտաքին քաղաքական արևելյան ուղղությանը: Միջնաժամկետ հեռանկարում իր ռազմավարական նպատակներին հասնելու համար Անկարան ստիպված է լինելու համագործակցել տարածաշրջանի մյուս երկու խոշոր դերակատարների՝ ՌԴ-ի և Իրանի հետ: Պատահական չէ, որ Արցախյան վերջին պատերազմից հետո Թուրքիան և Ադրբեջանը հատկապես մեծ կարևորություն են տալիս այսպես կոչված «Նախիջևանի միջանցքի» ձևավորման խնդրին, ինչը

<sup>74</sup> Nakhchivan agreement on the establishment of the cooperation council of turkic speaking states, 03.10.2009, [https://www.turkkon.org/assets/pdf/temel\\_belgeler/nakhchivan-agreement-on-the-establishment-of-the-cooperation-council-of-turkic-speaking-states-1-en.pdf](https://www.turkkon.org/assets/pdf/temel_belgeler/nakhchivan-agreement-on-the-establishment-of-the-cooperation-council-of-turkic-speaking-states-1-en.pdf) (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>75</sup> The Cooperation Council of Turkic Speaking States (Turkic Council), <https://www.turkkon.org/en> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>76</sup> Turkey creates its version of NATO? Vladimir Odintsov, Nov 08, 2020, <https://www.newagebd.net/article/121095/turkey-creates-its-version-of-nato> (այցելվել է 31.03.2021թ.), Turkey forges a strategic future independent of Russia and the West, Connor Dilleen, 21 Dec 2020, <https://www.aspistrategist.org.au/turkey-forges-a-strategic-future-independent-of-russia-and-the-west/> (այցելվել է 31.03.2021թ.):

դիտարկում են որպես իրենց տարածաշրջանային քաղաքականության կարևոր ձեռքբերումներից մեկը:

**Պանթուրքական ծրագրերում յուրաքանչյուր արտաքին քաղաքական և ռազմական հաջողություն Էրդողանը օգտագործելու է երկրի ներսում իր դիրքերն ամրապնդելու նպատակով, հետևաբար կարելի է ակնկալել, որ քաղաքական այս գիծը առաջիկա տարիներին պահպանվելու է:** Ինչ վերաբերում է Կովկասում և Կենտրոնական Ասիայում Թուրքիայի ներգրավվածության մեծացման աշխարհաքաղաքական բաղադրիչին, ապա այստեղ Անկարայի շահերը հիմնականում համընկնում են ԱՄՆ-ի և առհասարակ արևմուտքի երկարաժամկետ ծրագրերի հետ, հետևաբար, չնայած տարբեր հակասություններին, Էրդողանի այս քաղաքականությունը վայելելու է վերջիններիս աջակցությունը: Միննույն ժամանակ ՌԴ-ի և Իրանի հետ շահերի հավասարակշռման անհրաժեշտությունը Թուրքիային ստիպելու է առնվազն կարճաժամկետ հեռանկարում այս տարածաշրջանում հիմնականում կիրառել փափուկ ինտեգրման մարտավարություն՝ փորձելով խուսափել հնարավոր ռազմական բախումներից: **Սակայն, հաշվի առնելով Էրդողանի ներքին և տարածաշրջանային քաղաքականության փոխկապակցվածությունը, չի բացառվում, որ ներքաղաքական զարգացումներով պայմանավորված՝ Էրդողանը պարբերաբար գնա սրացումների, նույնիսկ ռազմական արկածախնդրության ճանապարհով:**

### 3. ԷՐԴՈՂԱՆԻ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ԱՎՏՈՐԻՏԱՐԻՉՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱՌՃԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԼՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե Թուրքիայի ներքաղաքական և արտաքին քաղաքական օրակարգում աստիճանաբար գերակշռող են դառնում ազգայնական և պանիսլամական գաղափարները, ապա Հայաստանում 2018-ին տեղի ունեցած ներքաղաքական փոփոխություններից հետո ընթանում է ճիշտ հակառակ գործընթացը: Միաժամանակ, երկրում ավտորիտարիզմի հաստատման ճանապարհին Թուրքիայի և Հայաստանի գործող իշխանությունների գործելաոճի որոշ դրվագներ ունեն տարօրինակ նմանություններ: Սակայն, եթե Էրդողանի ավտորիտար համակարգը հիմնված է ազգայնական, կրոնական գաղափարների ու պանթուրքական ծրագրերի վրա և մեծ մասամբ նպաստում է Թուրքիայի ազգային շահերի առաջխաղացմանը, ապա Հայաստանում դժվար է պատկերացնել, թե ինչի կարող է հանգեցնել ավտորիտար

համակարգի ձևավորումը՝ համեմված այսօրվա իշխանական շրջանակներում գերիշխող ազգայինը բացառող, նեոլիբերալ, գլոբալիստական գաղափարներով:

Թուրքիայում ազգայնական տարրերի ակտիվացումը երկարաժամկետ սպառնալիքի տակ է դնում ողջ տարածաշրջանի կայունությունն ու անվտանգությունը: Հաշվի առնելով ինչպես պատմական, այնպես էլ ոչ վաղ անցյալի փորձը, Թուրքիայում պանթուրքական և պանիսլամական գաղափարախոսության ամրապնդման և ծավալապաշտական քաղաքականության «հաղթարշավի» գլխավոր զոհերից մեկը կարող են դառնալ Հայաստանն ու հայ ժողովուրդը: Բնականաբար, ժամանակակից պայմաններում Թուրքիայի հակահայկական քաղաքականության մեթոդներն ու գործիքակազմը որոշակի փոփոխությունների են ենթարկվել, սակայն նպատակը՝ տարածաշրջանում հայկական գործոնի վերջնական չեզոքացումը, շարունակում է անփոփոխ մնալ: Նման իրավիճակում Հայաստանը պետք է դրսևորի չափազանց զգուշավոր քաղաքականություն, հաշվի առնի արդի պայմաններում Թուրքիայից բխող բոլոր սպառնալիքները և ճիշտ գնահատի Թուրքիայում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացների և զարգացումների հնարավոր ազդեցությունը Հայաստանի անվտանգության վրա:

Ինչպես նշվեց, Թուրքիայում կոնսուլիդացնելով գործադիր նախագահական ամուր համակարգն իր ձեռքերում՝ Էրդողանը որպես քաղաքական հենարան հետզհետե ավելի մեծ նշանակություն է տալիս ազգայնական ուժերի՝ մասնավորապես «Ազգայնական շարժում» կուսակցության, այդ թվում՝ ծայրահեղ ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպության հետ համագործակցությանը: Միաժամանակ, Թուրքիայի ընդդիմադիր դաշտը նույնպես զերծ չէ ծայրահեղ ազգայնական տարրերից, ինչը խոսում է թուրք հասարակության շրջանում ազգայնական գաղափարների մեծ պահանջարկի մասին: Սա նշանակում է, որ թե՛ Թուրքիայի ներկայիս իշխանությունները, թե՛ ընդդիմությունը որպես ներքաղաքական նպատակների իրագործման կարևոր գործոն դիտարկելու են տարածաշրջանում ծավալապաշտական և ազգայնական քաղաքականության ակտիվացումը:

Էրդողանը, ըստ էության, վերջին տարիներին կարողացել է նման քաղաքականության հաշվին ապահովել ազգայնական ուժերի մեծ մասի համախմբումը իր շուրջը և ամրապնդել իր ավտորիտար իշխանությունը, սակայն դեռևս նրա իշխանության կայունությունը երաշխավորված չէ, և վերջինս չի վայելում Թուրքիայի քաղաքացիների այնպիսի մեծ աջակցություն, որը երկարաժամկետ հեռանկարում կերաշխավորեր Էրդողանի անցնցում կառավարումը: Հետևաբար կարելի է ենթադրել, որ Թուրքիայի ներքաղաքական կյանքում ուժերի

հավասարակշռության ցանկացած խախտում Էրդողանը կարող է դիտարկել որպես իր իշխանության համար սպառնալիք, իսկ այդ սպառնալիքները չեզոքացնելու համար դիմել տարածաշրջանում նորանոր արկածախնդրությունների: Նաև այս համատեքստում պետք է դիտարկել բոլոր մակարդակներում Էրդողանի անվերապահ աջակցությունը Ադրբեջանին՝ Արցախյան վերջին պատերազմի ժամանակ:

Միաժամանակ, Թուրքիայի ավտորիտար իշխանությունների ծավալապաշտական հավակնությունները զսպելու տեսանկյունից Հայաստանի համար առաջնային կարևորություն է ստանում այդ հարցում միջազգային գործընկերների և դաշնակիցների աջակցությունը: Դա հնարավոր է, եթե Հայաստանում առկա է իրավիճակի լրջությունը գիտակցող, կանխատեսելի և տարածաշրջանում իր բնույթով ոչ ավտորիտար, այլընտրանքային և կառուցողական գործընկերոջ համբավ ունեցող իշխանություն: Վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները ցույց են տալիս, որ այժմ մեր երկրում ոչ միայն բացակայում է նման իշխանությունը, այլև հետևողականորեն տարվում է քաղաքական մի գիծ, որը իր բնույթով շատ նման է Թուրքիայում Էրդողանի կողմից ավտորիտար իշխանության հաստատման ու ամրապնդման գործընթացին:

Այսպես, ինչպես Թուրքիայի իշխող կուսակցությունը վերցնելով իշխանությունը՝ գնաց հասարակության բևեռացման և դրա միջոցով սեփական իշխանության ամրապնդման ճանապարհով, այնպես էլ ՀՀ ներկայիս իշխանությունները 2018-ից ի վեր գնացին հասարակությանը «սևերի և սպիտակների» բաժանելու ճանապարհով: Ինչպես Էրդողանի «Նոր Թուրքիայում», այնպես էլ «Նոր Հայաստանում» ավտորիտարիզմի հաստատման ճանապարհին որպես գլխավոր խոչընդոտ իշխանությունները դիտարկում էին պետական ինստիտուտները՝ առաջին հերթին ուժային կառույցները, ԶՈՒ-ը և դատական համակարգը: Այդ համակարգերի բարեփոխման անվան տակ հետևողականորեն քանդվում էին դրանք՝ այդպիսով փորձելով թուլացնել պետական համակարգի դիմադրությունը հակապետական գործընթացներին: Այս տեսանկյունից ուշագրավ է ՀՀ գործող վարչապետի դեռևս 2019-ի ամռանը արած հայտարարությունները, որտեղ նա Հայաստանը համարում էր ձախողված պետություն և հավաստիացնում էր, որ պետական ինստիտուտները գտնվում են կաթվածահար վիճակում<sup>77</sup>:

<sup>77</sup> «Մեր երկիրը գտնվում է ինստիտուցիոնալ կաթվածահար վիճակում». Փաշինյանն ուսումնասիրել է Սարգսյանի օրոք գրված գաղտնի փաստաթուղթը, 5 օգոստոսի, 2019, <https://www.azatutyun.am/a/30092885.html> (այցելվել է 31.03.2021թ.):



Հայաստանի «հեղափոխական» իշխանությունները, ինչպես Թուրքիայի պարագայում, ուժային կառույցները ենթարկեցնելու նպատակով ակտիվորեն նախաձեռնեցին մի շարք կադրային փոփոխություններ և վերադասավորումներ, որոնք երբեմն արվում էին անտրամաբանական հաճախականությամբ: Այսպես, իշխանության շուրջ 3 տարիների ընթացքում բազմիցս փոխվեցին բոլոր ուժային կառույցների ղեկավարները. այդ ընթացքում 3 անգամ նշանակվեց ԳՇ նոր պետ, 3 անգամ՝ ոստիկանապետ, 5 անգամ ԱԱԾ տնօրեն, 2 անգամ պաշտպանության նախարար և այլն: Եթե Թուրքիայում անցանկալի զինվորականներից ազատվելու գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ 2010-ին Էրդողանի հրահանգով Թուրքիայի դատախազության նախաձեռնած քննությունը՝ կապված 2003-ի ենթադրյալ հեղաշրջման փորձի հետ, ապա Հայաստանում նույնպիսի գործընթաց սկսվեց՝ կապված 2008թ. իրադարձությունների հետ: Երկու դեպքում էլ գործընթացների թիրախում ՁՈՒ վերնախավին վարկաբեկելու մտադրությունն էր:

Ուշագրավ է, որ երբ այս գործընթացի արդյունքում Թուրքիայի զինված ուժերի ցամաքային, ծովային և օդային ուժերի հրամանատարները հրաժարական տվեցին՝ այդ քայլով հույս ունենալով հանրային աջակցություն գեներացնել և կանգնեցնել վերոհիշյալ գործընթացը, արդյունքը եղավ հակառակը. Էրդողանը Թուրքիայի գեներալական կազմի ղեկավարի և այլ բարձրաստիճան զինվորական պաշտոններում նշանակեց իր համար ավելի հավատարիմ անձանց և ամրապնդեց իր ազդեցությունը Թուրքիայի ՁՈՒ-ի ու գեներալական կազմի նկատմամբ: Նմանօրինակ վարքագիծը հատուկ է նաև Հայաստանի ներկայիս իշխանություններին, քանի որ բազմիցս ականատես ենք եղել, երբ այս կամ այն բարձրաստիճան պաշտոնյայի հրաժարականից և իշխանության հանդեպ քննադատությունից հետո ոչ թե հետևություններ և վարքագծի փոփոխություն է եղել, այլ ուղղակի նշանակել են ավելի հավատարիմ կադրեր և շարունակել միևնույն քաղաքական գիծը:

Ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հայաստանում իշխանությունները չեն խորշում դատական իշխանության նկատմամբ ակնհայտ ոտնձգություններից: Ըստ էության, երկու դեպքում էլ ուժային կառույցներից հետո իշխանությունների հիմնական թիրախը դատական համակարգն է: Ընդ որում, դատական համակարգի անցանկալի կադրերից և որոշումներից խուսափելու համար երկու դեպքում էլ իշխանությունները գնում են ընդհուպ ամենաձայրահեղ քայլերի՝ սահմանադրական փոփոխությունների և հանրաքվեների:

Ուժային կառույցների և դատական համակարգի նկատմամբ վերահսկողություն սահմանելուց հետո հաջորդ կարևոր թիրախը ՁԼՄ-ներն են և քաղիասարակության

ներկայացուցիչները: Վերջիններիս էրդողանը մեղադրում էր օտարերկրյա գործակալներ լինելու մեջ և համառ հակաքարոզչության միջոցով չեզոքացնում էր բոլոր ընդդիմադիր և չեզոք լրատվամիջոցներին: Բավական է միայն հիշեցնել Իրանում վարչապետի արած հայտարարությունը օտարերկրյա գործակալների վերաբերյալ, վերջին տարիներին Հայաստանում ՁԼՄ-ներին լռեցնելու բազմաթիվ նախաձեռնությունները, չեզոք և ընդդիմադիր մամուլին պիտակավորելու և վերջիններիս դեմ թիրախավորված հակաքարոզչությունը, որպեսզի ակնհայտ դառնա, թե որքան նման է այս հարցում Հայաստանի և Թուրքիայի իշխանությունների քաղաքականությունը:

Հայաստանում և Թուրքիայում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացների նկատմամբ իշխանությունների արձագանքի ուշագրավ համընկնման ևս մեկ օրինակ է էրդողանի և Հայաստանի վարչապետի արձագանքը այսպես կոչված «զինված հեղաշրջման» փորձերին: Ընդ որում, հարկ է նշել, որ իրականում եթե Թուրքիայում 2016-ի իրադարձությունները կարելի է պիտակավորել որպես զինված հեղաշրջման փորձ, ապա Հայաստանում 2021թ. փետրվարին ՁՈՒ բարձրաստիճան սպայակազմի գործողությունները որևէ կերպ չի տեղավորվում հեղաշրջումների տրամաբանության մեջ, սակայն ՀՀ իշխանությունների արձագանքը տարօրինակ ձևով հիշեցնում էր 2016-ի հուլիսին էրդողանի վարքագիծը: Ավելին, կարելի է պնդել, որ հենց ՀՀ իշխանությունները գնացին ՁՈՒ-ի դեմ «հեղաշրջման» ճանապարհով՝ փորձելով ամեն գնով ազատվել իրենց մտահոգություններն արտահայտած զինվորականներից<sup>78</sup>: Ուշագրավ է, որ միակ երկիրը, որ Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները որակեց որպես հեղաշրջման փորձ, հենց Թուրքիան էր, որը տարբեր մակարդակներով՝ ԱԳՆ-ից մինչև նախագահ, սկսեց ակնհայտորեն քննադատել Հայաստանի ԳՇ-ի գործողությունները<sup>79</sup>:

Այսպես, երկու դեպքում էլ բարձրաստիճան զինվորականությունը միանգամից մեղադրվեց զինված հեղաշրջման մեջ և վերջիններիս դեմ մոբիլիզացվեց քաղաքացիական ռեսուրսն ու մյուս ուժային կառույցները: Երկու դեպքում էլ երկրի ղեկավարները օգտվեցին պաշտպանության նախարարի հավատարմությունից և

<sup>78</sup> Prime Minister Pashinian Stages Own Coup Against Armenia's Military, By: Vladimir Socor March 11, 2021, <https://jamestown.org/program/prime-minister-pashinian-stages-own-coup-against-armenias-military/> (այցելվել է 31.03.2021թ.):

<sup>79</sup> Turkey condemns coup attempt in Armenia, FM Çavuşoğlu says, FEB 25, 2021, <https://www.dailysabah.com/politics/diplomacy/turkey-condemns-coup-attempt-in-armenia-fm-cavusoglu-says> (այցելվել է 31.03.2021թ.), Turkey's president says coup attempt in Armenia unacceptable, The Independent, February 27, 2021, <https://www.independent.co.uk/turkeys-president-says-coup-attempt-in-armenia-unacceptable/> (այցելվել է 31.03.2021թ.):

փորձեցին վերջինիս միջոցով ազդել ըմբոստացած գեներալական կազմի վրա: Ուշագրավ է, որ թե՛ Էրդողանը, թե՛ ՀՀ գործող վարչապետը այդ իրադարձությունների ընթացքում ընտրեցին ամենաարկածախնդիր ճանապարհը՝ աջակիցներին ուղղորդեցին իրենց դեմ դուրս եկած ուժերի դեմ: Եթե Թուրքիայում դա հանգեցրեց զոհերի, ապա Հայաստանում ԶՈՒ գեներալական կազմի և ընդդիմության խոհեմության շնորհիվ հնարավոր եղավ խուսափել բախումներից, թեև դրանք կարող էին տեղի ունենալ, երբ Փաշինյանը իր կողմնակիցների հետ քայլերթ նախաձեռնեց և շարժվեց ճիշտ այն ուղղությամբ, որտեղ տեղի էր ունենում ընդդիմության հանրահավաքը:

Թուրքիայում հեղաշրջման փորձից հետո Էրդողանը անմիջապես ազատվեց բոլոր անցանկալի զինվորականներից, քանի որ արդեն հասցրել էր իրեն ենթարկեցնել գրեթե բոլոր պետական կառույցները, այդ թվում՝ դատական համակարգը: Հայաստանում դա այդպիսի արագությամբ տեղի չունեցավ, քանի որ իշխանությունները դեռևս չեն հասցրել ամբողջությամբ քանդել և հնազանդեցնել բոլոր պետական ինստիտուտները, այդ թվում՝ դատական համակարգը: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ իշխանությունները նման ծրագրեր չունեն, ուղղակի ի տարբերություն Թուրքիայի՝ կփորձեն դա կյանքի կոչել աստիճանաբար, հատկապես որ իրենց համառությամբ արդեն իսկ կարողացել են ազատվել ԳՇ պետից և նրա առաջին տեղակալից: Ուշագրավ է, որ Էրդողանը 2016թ. իրադարձություններից հետո չխորշեց բարձրաստիճան գեներալների գրեթե 50%-ից, բանակային կորպուսների հրամանատարներից ազատվելու վտանգավոր գործընթացից՝ փոխարենը գեներալի կոչումներ շնորհելով իրեն հավատարիմ զինվորականներին: Հայաստանում այս սցենարը ևս չի բացառվում, եթե ի վերջո իշխանություններին հաջողվի ամրապնդել բոլոր պետական ինստիտուտների հնազանդությունը:

Էրդողանը օգտագործեց 2016-ի հուլիսյան իրադարձությունները բարձրաստիճան զինվորականությանը երկրի ներքին, արտաքին և նույնիսկ ռազմական քաղաքականության վրա որոշիչ ազդեցություն ունենալու լծակներից զրկելու նպատակով: Էրդողանը քանդեց գեներալական կազմի բյուրոկրատական ինքնուրույնությունը և սկսեց անխոչընդոտ միջամտել զինվորականների առաջխաղացման, պաշտոնից հեռացման, ներքին կանոնակարգի հարցերին: Նույնը կարող է տեղի ունենալ Հայաստանում, քանի որ բարձրաստիճան զինվորականության չեզոքացումը ՀՀ գործող իշխանություններին հնարավորություն կտա այս ոլորտներում ավելի անկաշկանդ քաղաքականություն վարել, այդ թվում՝ Թուրքիայի և Ադրբեյջանի հետ հարաբերությունների կառուցման հարցում:

Ուշագրավ է, որ 2016-ի հեղաշրջման փորձից հետո Թուրքիայում հայտարարված արտակարգ դրությունը պահպանվեց շուրջ 2 տարի, որը Էրդողանն օգտագործեց իր իշխանությունը վերջնականապես ամրապնդելու նպատակով: Այս համատեքստում պետք է հիշել, որ շուրջ մեկ տարի՝ 2020-ի մարտից մինչև 2021-ի մարտը Հայաստանը գտնվում էր արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում, այդ թվում՝ չհիմնավորված նպատակներով: Այստեղ ևս արտակարգ և ռազմական դրությունը օգտագործվում էր բացառապես երկրում իշխանության դիրքերն ամրապնդելու և հնարավոր հակառակորդներին չեզոքացնելու նպատակով: Եթե Թուրքիայում արտակարգ դրության պայմաններում սահմանադրական փոփոխություններ և ընտրություններ անցկացվեցին, ապա մեզ մոտ իրականացվեցին սահմանադրական փոփոխություններ, անցկացվեցին մի շարք աղմկահարույց օրինագծեր, տեղի ունեցան քաղաքական ձերբակալություններ, այդ թվում՝ ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ:

Թուրքիայի ներքաղաքական գործընթացների ամենախորհրդավոր դրվագներից մեկը, ինչպես նշվեց, 2017թ. հունիս-հուլիսին տեղի ունեցած այսպես կոչված «արդարության երթն» էր, որը շուրջ մեկ ամսվա ընթացքում կարողացավ մոբիլիզացնել աննախադեպ քանակի ցուցարարներ, սակայն քաղաքական տեսանկյունից որևէ լուրջ արդյունք չգրանցեց: Տարօրինակ զուգադիպությամբ, գրեթե նույն սցենարով ընդամենը մի քանի ամիս անց՝ 2018թ. գարնանը Հայաստանում տեղի ունեցավ ընդդիմության հայտնի քայլերթը և դրան հետևած իշխանափոխությունը:

Հատկանշական է Թուրքիայում և Հայաստանում տեղի ունեցած ևս մեկ գործընթացի զուգադիպությունը: Իշխանության և զինվորականության միջև հակասությունները հաղթահարելու և բանակի խաթարված հեղինակությունը վերականգնելու նպատակով Էրդողանը հաճախ կիրառում է Թուրքիայի սահմաններից դուրս ԶՈՒ-ի կիրառման մարտավարություն՝ Սիրիա, Իրաք, Լիբիա, որոշակի առումով նաև ԼՂ և այլն: Այսպիսով փորձ է արվում բարձրացնել կադրային փոփոխությունների արդյունքում բանակի խաթարված հեղինակությունը և ցույց տալ Էրդողան-բանակ ուղղահայացի արդունավետությունը: Հայաստանի համար նմանատիպ իրադարձություն կարելի է համարել 2020թ. հուլիսին տեղի ունեցած Տավուշյան գործողությունները և դրանից հետո իրականացված աննախադեպ միջոցառումները: Սակայն, եթե Թուրքիան, ունենալով աշխարհի հզորագույն զինված ուժերից մեկը, կարող է իրեն թույլ տալ ներքաղաքական նպատակներով գնալ նման արկածախնդրությունների, Հայաստանի համար այն ողբերգական հետևանքներ ունեցավ:

Ի վերջո, ինչպես Էրդողանը, այնպես էլ Հայաստանի ներկայիս իշխանությունները փորձում են ներքաղաքական շահերին ծառայեցնել նաև արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտական կորպուսը: Եթե Թուրքիայում հեղաշրջման փորձից հետո Էրդողանն ազատվեց անցանկալի դիվանագետների շուրջ 30%-ից, ապա Հայաստանում, այդ թվում՝ փոխարինող կադրերի բացակայության պատճառով, իշխանությունները բավարարվում են արտգործնախարարի և հիմնական բարձրաստիճան դիվանագետների փոփոխություններով: Ընդ որում, արտաքին քաղաքականությունը ներքաղաքական շահերին ծառայեցնելու գործելաոճը երբեմն հսկայական հարված է հասցնում հայկական դիվանագիտության հեղինակությանը (օրինակ՝ կարելի է հիշատակել նախկին արտգործնախարար Մնացականյանի հարցազրույցը բրիտանական «Բի Բի Սի»-ին, որտեղ վերջինս կրկնում էր «ճամպրուկներով կաշառքի» մասին ներքաղաքական օրակարգում սպրդած թեզերը), իսկ կոնկրետ Արցախի հարցում այն հանգեցրեց աղետալի պատերազմի: Ի վերջո, եթե Թուրքիայում նման քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ արտաքին քաղաքականության «զրո խնդիր հարևանների հետ» գաղափարից հետզհետե անցում կատարվեց այսպես կոչված «արժեքավոր մենության» գաղափարին, ապա Հայաստանի պարագայում անհեռատես արտաքին քաղաքականությունը երկիրը իրոք հասցրել է «մենության» և միջազգային մեկուսացման իրավիճակի, ինչը որևէ կերպ հնարավոր չէ «արժեքավոր» համարել:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի և Հայաստանի գործող իշխանությունների քաղաքականության համադրությունը ցույց է տալիս, որ առկա են մի շարք տարօրինակ նմանություններ՝ մի էական տարբերությամբ: Նախ, Թուրքիայում շուրջ 20 տարվա ընթացքում տեղի ունեցած գործընթացները Հայաստանում փորձ է արվում կրկնել ընդամենը 2-3 տարվա ընթացքում: Միաժամանակ, եթե Թուրքիայում Էրդողանի ավտորիտար իշխանության ամրապնդումը միտված է այդ երկրի ազգայնական, ծավալապաշտական ծրագրերի իրականացմանը, ապա Հայաստանում ավտորիտար համակարգի հաստատումը, այն էլ առանց որևէ պետականամետ գաղափարախոսության, արդեն իսկ երկիրը կանգնեցրել է աղետի առջև և կարող է առհասարակ սպառնալ պետականության գոյությանը:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: